

Էջմիածին

1979

Ս.

АЖС 146



ԼԶ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար

1979



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1979 թ. հունվարի 6)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն»:

«Եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,

Շատ դարեր առաջ, անմոռաց մի օր, աշխարհի վրա մի լուռ գիշեր էր, խորհուրդներով լի, երբ ինչպես երբեք՝ երկինք ու երկիր ողջագուրվեցին, երբ ինչպես երբեք՝ երազ ու սպասում գրկախառնվեցին, երբ ինչպես երբեք՝ լույս բարձունքներից հնչեցին ձայներ քաղցրանուշ հրեշտակների թեվերով երկնքից իջնող, որ բերում էին մեծ ավետիսը՝ մարդկային խոնարհ հուսացյալ բազմություններին՝ թե ահա ծնվում է սպասված Մեսիան, Փրկիչը օծյալ, ծնվում է Իշխանը խաղաղության, Արեգակն արդարության...:

Այսպես ահա ծնվեց Որդին Աստուծո Քրիստոս, այսպես ահա երկիր իջավ պատգամը երկնքի, ավետիսը փրկարար ու ազատարար՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Ու այնուհետև հրաշք ավետիսը այդ, դարեր ու դարեր, իբրև սուրբ հրավեր՝ սիրո, ճաշտության ու եղբայրության՝ բաշխվեց աշխարհին, մարդկանց, ազգերին, միշտ նույն քաղցրությամբ, միշտ նույն դյութանքով, արդարության ծարավի սերունդներին բոլոր, որոնք իրենց հայացքը դեպի երկինք հառած, տքնեցին, մաքառեցին ու երազեցին միշտ՝ երկնքից իջնող պատգամները կենսագործված տեսնել:

Ողջ պատմությունը և բոլոր վեհ ու ազնիվ իրագործումները մարդկային, շաղախված են խաղաղ ու արդար մի աշխարհի լուսաշող տեսիլքով:

Ու այսօր էլ, մենք բոլորս, հակառակ անցյալի ու մեր օրերի բոլոր հուսախաբություններին, խարխափումներին, նույն սպասումներով արդար, նույն հույզերով անմար՝ մեր հայացքը սևեռած ենք պահում դեպի երկինք, մեր սրտերն ենք բացում հրեշտակների երգին, համոզումով անշարժ, որ մար-

դիկ և ժողովուրդներ չունեն փրկության ուրիշ ճանապարհ, քան միատեղ ապրել այս երկրագնդի վրա, իբրև խաղաղարար գործակից եղբայրներ, փոխադարձ հաճույքամբ: Ատոմական ուժերի սանձազերծման այս դարում, ավելի քան երբեք, այլևս այլ ճանապարհ չունեն մարդիկ, պետությունները բոլոր:

Հայաստանյայց եկեղեցին ու ժողովուրդը, գուցե առավել քան այլ ազգություններ, այս երազանքով են ապրել ու զոհվել, տխուր անցյալում: Այսօր էլ հայ ազգի գերագույն իղձն է, որ աշխարհի վրա համայն, լինի «խաղաղութիւն» և «ի մարդիկ հաճութիւն», որպեսզի ազգությունները բոլոր՝ ապրեն ու գործեն հաշտ ու համերաշխ, ազատ, անկաշկանդ, ձերբազատված հին նախապաշարումներից, հեռու՝ մեկը մյուսին շահագործելու և տիրակալելու սին հավակնություններից, սպառազինվելու այլևս անիմաստ դարձած մրցավազքերից:

Մեր ներկայի ու ապագայի նկատմամբ այս լավատեսությամբ է որ Մայր Աթոռս, համայն ժողովուրդը մեր, Հայաստանում և սփյուռքում, տոնախմբեց անցնող տարվա ընթացքում՝ վերածնունդը Արևելյան Հայաստանի, ազատարար միավորումը Ռուսաստանի հետ 1828-ին, հաղթանակովը Սարդարապատի հերոսամարտի 1918-ին, և հոչակումովը նոր Հայաստանի Հանրապետության, որ ահա վաթսուն տարիներ շարունակ, եղբայր ազգությունների մեծ միության մեջ, աճում է ու զարգանում իբրև ազգային պետություն, խաղաղության և ապահովության պայմաններում, նյութական վերաշինության ու ազգային մշակույթի փայլուն իրագործումներով:

Չմոռանանք երբեք որ 1828-ին արդի Հայաստանի հողամասի վրա հայ բնակչության թիվն էր՝ տասնյոթ հազար հոգի միայն, 1920-ին՝ հազիվ յոթ հարյուր հազար, իսկ այժմ արդեն երեք միլիոն ամբողջ: Եվ ամեն տարի ծնվում են՝ այստեղ՝ վաթսուն հազար երեխաներ: Ահա թե ինչու հայրենական վերածնունդի պայծառ իրողությունն այս, անցյալ տարի ցնծությամբ ողջունեցին բոլոր հայերը անխտիր, ամեն տեղ ուր մի հայի սիրտ բաբախում էր ազատ:

Ավաղ, սակայն, այս ուրախությունը վերջերս մշուշվեց մի պահ, իբրև հետևանք տխուր դեպքերի եղբայրական Լիբանանում, երբ զոհ գնացին մեր հավատակից հայ եղբայրներն ու քույրերը զանգվածաբար: Եղան մեռյալներ, եղան վիրավորներ բազում, և հազարավոր ընտանիքներ մնացին անտուն ու անպաշտպան:

Սուրբ Ծննդյան ու Աստվածահայտնության հրաշք խորհուրդներով լի այս սրբազան պահին, Մենք մի անգամ ևս աղոթում ենք, որ Փրկիչը մեր Քրիստոս Իր խաղաղությունը իջեցնի լիբանանյան օրհնյալ երկրի վրա, որպեսզի այնտեղ բնակվող համայնքները բոլոր, քրիստոնյա թե մահմեդական, սիրով համերաշխած, ձեռք-ձեռքի տված, նոր ոգեշնչումով վերաշինեն իրենց երկիրը վիրավոր ու դարբնեն գեղատեսիլ Լիբանանի նոր ապագան, առավել պերճ ու պայծառ:

Մինչ այդ, բոլոր հայերը, քրիստոնեական խղճի պարտք ունեն օժանդակելու Լիբանանի վերականգնման գործին և իրենց հայ եղբայրներին:

Արդեն հայ եկեղեցու բոլոր կենտրոններում կազմակերպված է համազգային հանգանակություն Մեր հովանավորության ներքո: Մենք մի անգամ ևս սրտագին կոչ ենք ուղղում մեր եկեղեցու բոլոր զավակներին, լիաբուռն կերպով մասնակցելու սույն հանգանակության, ի խնդիր իրենց աղետյալ

եղբայրների և քույրերի վերքերի բուժման, ի խնդիր հայոց աղոթքի տների ու կրթական և մշակութային հաստատությունների վերականգնման:

Թող Աստված Իր կենարար հովանին միշտ տարածյալ պահի մեր առաքելական Մայր եկեղեցու վրա, մշտապես մնա օգնական համայն մեր հավատավոր ժողովրդին որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, ու հավետ խաղաղ ու անվտանգ պահպանի մեր վերածնված Մայր երկիրը Հայաստան, հարատև վերելքի և ծաղկումի ճանապարհի վրա:

Փրկչին մեր Հիսուսի սուրբ Ծննդյան շնորհներով լուսավորված մեր օրերի մարդիկ, ժողովուրդները բոլոր, թող փարատեն մշուշները միջազգային կյանքի և տեսնեն ուղիղ ճանապարհը դեպի խաղաղություն, դեպի հաճություն, միակ ճանապարհը անխտիր բոլորի երջանիկ համակեցության:

«Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք, հաւատովք ի Յիսուս Քրիստոս» (Գաղ. Գ 27), «որ եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց և խաղաղութիւն մերձաւորաց» (Եփես. Բ 18). ամեն:



Բոլոր Եկեղեցիներ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ-ԻՆ
(Ալեքսանդրիա)

Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍ Ա-ԻՆ (Երուսաղեմ),

Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԱՄԲԱ ՇԵՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Ալեքսանդրիա),

Անտիոքի և համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԷԼԻԱՍ Դ-ԻՆ (Դամասկոս),

Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),

Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),

Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԺՈՒՍՏԻՆԻՆ (Բուխարեստ),

Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),

Անտիոքի և համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),

Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ-ԻՆ (Բեյրութ),

Քենթրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆԻՆ (Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),

Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),

Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵԻՆ (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՀՄԱՅԱԿ-ՊԵՏՐՈՍ ԿԵՏԻԿՅԱՆԻՆ (Բեյրութ),

Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),

Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),

Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),

Փարիզի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),

Լիոնի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԸՆԱՐԻՆ (Լիոն),

Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ, Նորին
Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Մարսելի արքեպիսկոպոս, Գերաշնորհ
ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
Լատվիական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ ավետարանական-լութերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն ԱԼՖՐԵԴ ՏՈՈՄԻՆԳԻՆ (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
ՄԱՈՒՐԻԼԻՈ ՍԱԿԿԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Իրաքի պապական նվիրակ, Գերաշնորհ
ԺԱՆ ՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ՊՈՂՈՍ վարդապետ ԱՆԱՆՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր
ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻՆ (Մարսել),
Վերապատվելի ՎԱՀԱՆ ԹՈՒԹԻԿՅԱՆԻՆ (Նյու Յորք):

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Սիրելի Եղբայր Մեր ի Քրիստոս,

Մեր հայացքը սևեռած դեպի երկնքի բարձունքները, որտեղից դարեր առաջ ավետվեց մեր աշխարհին հրաշալի ծնունդը Աստվածորդու և պատգամը խաղաղության, Մենք այսօր նույն լույս ավետիսով ողջունում ենք Ձեզ, հավատքով աներեր, որ սուրբ Ծննդյան շնորհներով պիտի բաշխվի մեր օրերի մարդկությանը ավելի խաղաղարար ոգի և ավելի փոխադարձ հաճություն ազգերի և պետությունների միջև:

Փառք մեր Փրկչին՝ Քրիստոսին, որ Իր հետ երկիր իջեցրեց մեծ ու սքանչելի տեսիլքը խաղաղության և ի մարդիկ հաճության:

Թող բարին Աստված Իր խաղաղաբեր ու կենարար սերը առատորեն բաշխի նաև բոլոր մեր քույր եկեղեցիներին, որպեսզի հետզհետե առավել ճառագայթի երկրի վրա սուրբ Ավետարանի լույսը և տիեզերական եղբայրությունը քրիստոնեական:

Այս երջանիկ առիթով թույլ տվեք նաև Ձեզ ներկայացնել Մեր ամենաջերմ մաղթանքները Ձեր քաջառողջության և Ձեր սրբազան առաքելության պտղառատ իրագործումների համար՝ ի փառս Քրիստոսի և ի խնդիր առավել խաղաղ ու արդար մի կյանքի լուսաբացի համայն մարդկության համար:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

*
* *

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամաւորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության սրտագին ոգին քույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:

Մեր հայացքը սևեռած դեպի բարձունքները երկնքի, ուրկե դարեր առաջ ավետվեցավ մեր աշխարհին հրաշալի ծնունդը Աստվածորդվույն և պատգամը խաղաղության, Մենք այսօր նույն լույս ավետիսը կբերենք Ձեզի, հավատքով աներեր, որ շնորհներովը սուրբ Ծննդյան, պիտի բաշխվի ավելի խաղաղարար ոգի մեր օրերու մարդկության և ավելի փոխադարձ հաճույուն ազգերու և պետություններու միջև:

Փառք Փրկչին մեր Քրիստոսի, որ Իր հետ երկիր իջեցուց մեծ ու սքանչելի տեսիլքը խաղաղության և ի մարդիկ հաճության:

Թող բարին Աստված Իր խաղաղությունն ու կենարար սերը առատորեն բաշխե նաև մեր եկեղեցիներուն, հոգևոր բարեջան սպասավորներուն, թեմական-համայնքային վարչական մարմիններու հարգարժան անդամներուն և համայն մեր սիրեցյալ հավատավոր ժողովուրդին:

«Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Ա Թես. Բ 19). ամեն:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԲԱԲԿԵՆ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին երջանիկ ենք Ձեզ ներկայացնելու Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և անձամբ Մեր շնորհավորանքները և բարի մաղթանքները Ձեր արևշատության ու Ձեր հայրենանվեր գործունեության փայլուն հաջողության համար:

Թող 1979 թվականը ևս լինի խաղաղության ու շինարար վերելքի տարի մեր մայր հայրենիքի համար՝ Սովետական բազմազգ Միության եղբայրական մեծ ընտանիքում:

Շնորհավոր Նոր տարի:

Ամենախորին հարգանոք՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ,
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Երևան

Ուրախ սրտով, հանուն Հայաստանյայց եկեղեցու, շնորհավորում ենք Ձեզ Նոր տարվա առիթով՝ մաղթելով Ձեզ անսասան քաջառողջություն և միշտ անսպառ եռանդ մեր մայր հայրենիքի վերելքի ու ծաղկման համար:

Թող մեր վերածնված երկիրը աճի ու բարգավաճի սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում խաղաղության ու ապահովության մեջ, այժմ և միշտ:

Շնորհավոր Նոր տարի:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ,
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Երևան

Հանուն Հայաստանյայց եկեղեցու և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի ուրախ ենք Ձեզ ներկայացնելու Մեր շնորհավորանքները Նոր տարվա երջանիկ առիթով և մաղթել Ձեզ անսպառ եռանդ հայրենանվեր աշխատանքի, և միշտ քաջառողջություն:

Մենք սրտանց աղոթում ենք, որ հառաջիկա նոր տարին լինի խաղաղության ու ժողովուրդների բարեկամության Է՛լ ավելի ամրապնդման տարի՝ ի բարօրություն աշխարհի բոլոր ժողովուրդների և հերջանկություն մեր հարազատ ժողովրդի, որ խաղաղ ու ապահով աճում է ու ծաղկում սովետական եղբայր ժողովուրդների մեծ ընտանիքում:

Շնորհավոր Նոր տարի:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ Նոր տարվա շնորհավորանքի և բարեմաղթությունների համար: Ես նույնպես շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ և ցանկանում Ձեզ քաջառողջություն ու երջանկություն:

Թող նոր տարին լինի խաղաղության, շինարար աշխատանքի, մեր հայրենիքի հետագա ծաղկման ու բարգավաճման տարի:

ԲԱԲԿԵՆ ՄԱՐԿԻՍՈՎ
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ:

Հաճեցեք ընդունել քաջառողջության, բարօրության իմ լավագույն մաղթանքները:

Թող նոր տարին լինի մեր հայրենիքի բարգավաճման, ամբողջ աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարեկամության ամրապնդման տարի:

Հարգանքներով՝

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորանքներ եմ մաղթում նոր՝ 1979 թվականի առթիվ:

Թող նոր տարին բերի խաղաղություն համայն աշխարհին, քաջառողջություն և երջանկություն Ձեզ՝ Ձեր բեղմնավոր, հայրենանվեր աշխատանքում:

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան





ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՖԱԴԵՅ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հունվարի 8-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, Նոր տարվա առիթով, այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Տ. Սարգսյանին, Երևանում, Կառավարական պալատում:

Հայոց Հայրապետի և Մինիստրների խորհրդի պարոն նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որին մասնակցեցին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ Հ. Ե. Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Ա. Հասրաթյանը:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ՀՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐԵԱՆԻՆ,
ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ,
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ս. Էջմիածին

Փառք կու տանք Աստուծոյ ամենակալին որ Իր սուրբ հովանիին տակ ապահով ու պայծառ կը պահպանէ մեր սուրբ եկեղեցին՝ իր եկեղեցիներով ու հաւատացեալ ժողովուրդով, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Այս մխիթարական իրականութիւնը կը պարտինք նաև մեր եկեղեցւոյ սպասաւորներուն, որոնք կանգնած կը մնան իրենց նուիրական կոչումին բարձրութեան վրայ՝ իբրև հոգևոր մշակներ և ժողովուրդի առաջնորդներ:

Մեր օրերու այդ նուիրեալներու շարքին՝ մեր աւագ հոգևորականներէն մին է Ձերդ Սրբազնութիւնը՝ իբրև անձնազոհ ու հաւատարիմ լուսաբարապետ Մայր Աթոռիս, իբրև բարի հովիւ ժողովրդեան, իբրև անձանձրոյթ աղօթող ու գործող ի շինութիւն մեր զաւակներու հոգևոր կեանքին:

Յիշատակութեան արժանի կը գտնենք նաև երկար տարիներու Ձեր շինարար գործունէութիւնը ի գլուխ թեմին հայոց Ատրպէյճանի, սիրուած ու գնահատուած թէ՛ եկեղեցական իշխանութեանց, թէ՛ համայն հաւատացեալներու կողմէ:

Իբրև Հայրապետը Ձեր, սրտանց կ'ողջունենք ու կը գնահատենք ամբասիր ծառայութեան Ձեր վաստակը և Ձեզ կը շնորհենք ԱՐՔՈՒԹԵԱՆ

պատիւ, աղօթքով ջերմագին որ Տէրը Ձեզի պարգևէ կեանքի ու աշխատանքի երկար, շատ երկար տարիներ ևս, որպէսզի Դուք նոր ներշնչումներով ու վերանորոգուած եռանդով շարունակէք Ձեր առաքելութիւնը, յառաջել շէնութիւն ու պայծառութիւն մեր սուրբ եկեղեցւոյ և ի մխիթարութիւն մեր հաւատաւոր ժողովուրդին:

«Եւ դուք իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր, յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգևոր պատարագս հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի» (Ա Պետրոս Բ 5). ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2 նոյեմբերի
1978 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԷ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 919

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՍԳՆՉՄԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ



ՅԱՎԱԿՑԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԱՀԱԾ ԱՂԵՏՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ,
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Վստահեցնում եմ Ձերդ Սրբությանը, որ ես մշտապես հետևում եմ Լիբանանում իրադրության զարգացմանը և որոնում պատշաճ բոլոր միջոցները, որոնցով հնարավոր կլիներ նպաստել խաղաղության և համաձայնության վերահաստատմանը նախ և առաջ քրիստոնյա համայնքների միջև:

Հրահանգել եմ մեր օգնության մարմիններին, որպեսզի իրենց կարելին ի գործ դնեն՝ օգնելու համար այդ իրադարձությունների բոլոր զոհերին առանց բացառության:

Միանում եմ Ձեզ Տիրոջն ուղղված Ձեր աղոթքների մեջ. նա՛ միայն կարող է վերահաստատել ճշմարիտ խաղաղությունը:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՊԱՊ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ

Վատիկան,
8 դեկտեմբերի 1978 թ.

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԻՄԵՆԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, թանկագին և Սրբազան Եղբայր ի Քրիստոս,

Ստացել ենք Ձեր 23 նոյեմբեր 1978 թվակիր նամակը:

Այսու եղբայրաբար հայտնում ենք Ձերդ Սրբությանը, որ Մենք բաժանում ենք Ձեր մտահոգություններն ու անհանգստությունը՝ Լիբանանի եղբայրասպան կռիվների ընթացքում տեղի հայ բնակչության կրած տառապանքների առթիվ:

Մենք համամիտ ենք Ձեզ հետ և անկեղծորեն ցավում ենք, որ գեղեցիկ Լիբանանը արյունահեղ մարտերի թատերաբեմ դարձավ, և որ առաջին հերթին տառապում են խաղաղ և անմեղ մարդիկ՝ քրիստոնյա հայ ժողովրդի զավակները:

Լիբանանի հայ ազգաբնակչության նկատմամբ գործադրվող գազանությունների, ճնշումների և անգութ հալածանքների մասին եղած հաղորդումները Մեզ ցնցեցին, մանավանդ, երբ հայտնի դարձավ, որ այդ ամենը կատարվում է զուտ այն պատճառով, որ հայերը կամեցել են չեզոք դիրք գրավել և դրանով իսկ զոհ են դարձել երկրում տեղի ունեցող երկպառակությունների:

Մենք ջերմորեն աղոթում ենք առ ամենակալն Աստված, որ խաղաղվեն կռվող կողմերը, և Տերը գթա անմեղորեն տառապող հայ ժողովրդին: Մենք հավատում ենք, որ արդարությունը կհաղթանակի, կամայականությունները կվերանան, և տանջված հայ ժողովուրդը կբուժի իր ծանր վերքերը, որոնք նրան բազմիցս բաժին են ընկել նրա բազմադարյան պատմության ընթացքում: Մենք հավատում ենք, որ կգա ցանկալի խաղաղությունն ու բարօրությունը Լիբանանի համար:

Մենք անդադրում պիտի աղոթենք, որպեսզի շուտ հասնի այդ լուսավոր և ցանկալի ժամը, և մինչ այդ ցույց պիտի տանք Ձերդ Սրբությանը բարոյական և այլ տեսակի ամեն օժանդակություն:

Սույն Մեր գրությամբ կամենում ենք հայտնել Ձեզ, որ փոխանցում ենք Ձեր անվանը քսանհինգ հազար ռուբլի՝ հօգուտ Լիբանանի աղետյալ հայ համայնքի, որպես Մեր եղբայրական մասնակցությունը՝ կամայականությունների զոհ դարձածների օժանդակության գործին: Թող ռուս պրավոսլավ եկեղեցու համեստ լուման ծառայի անմեղ տառապյալների կացության թեթևացմանն ու նրանց մխիթարմանը՝ բազմաչարչար Լիբանանի խանգարված խաղաղ կյանքի վերահաստատման պայմաններում:

Մեկ անգամ ևս արտահայտում ենք Ձերդ Սրբությանը Մեր եղբայրական համերաշխությունը և հավաստիացնում, որ անշեղորեն պիտի հետապընդենք խաղաղության, արդարության և աշխարհի ժողովուրդների միջև իսկական բարեկամության համար մղվող պայքարը:

Սրտագին բարեմաղթություններով հայտնում ենք Տիրոջ ողորմությունն ու առատաձեռն օգնականությունը Ձեր մարդասիրական ծառայությունների համար ու մնում միշտ անփոփոխ սիրով ի Քրիստոս՝

ՊԻՄԵՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ

Մոսկվա,
7 դեկտեմբերի 1978 թ.

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն, թանկագին և սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս,

Լիբանանում տեղի ունեցող ողբերգական դեպքերի կապակցությամբ, որոնք կատարվում են հայ բնակչության հանդեպ աջ քրիստոնեական տարրերի կողմից աներեւակայելի գործողություններով, վրաց ուղղափառ եկեղեցու և իմ անունից հայտնում ենք Ձերդ Սրբությանը և եղբայրական հայ ժողովրդին մեր խորին կարեկցանքը:

Այս կապակցությամբ մեր կողմից հեռագիր է հղված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրին՝ խնդրելով, որպեսզի շտապ միջոցներ ձեռնարկվեն՝ Լիբանանի հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունները դադարեցնելու:

Այսօր մենք պաշտոնական Հայտարարություն տվեցինք մամուլին՝ արտահայտելով մեր զայրույթը կատարված դեպքերի առթիվ և կոչ արեցինք բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ բողոքի ձայն բարձրացնելու հակամարդասիրական այդ գործողությունների դեմ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԻԼԻԱ Բ
ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ

Թբիլիսի,
28 նոյեմբերի 1978 թ.

ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ ՏՎՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի դեկտեմբերի 3-ին, կիրակի օրը, ժամը 14-ին, Վեհարանի ընդունելության դահլիճում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ **Ս. Սահակ—Ս. Մեսրոպ** և **Ս. Ներսես Շնորհալի** շքանշանների, ինչպես նաև հայրապետական օրհնության կոնդակների տվչության հանդիսություն:

Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ և Գերագույն հոգևոր խորհրդի որոշումով վերջերս կարգ հաստատվեց Մայր Աթոռում քսան և ավելի տարիների աշխատանքային վաստակ ունեցողներին վարձատրելու այդ շքանշաններով և օրհնության կոնդակներով:

Սույն հանդիսությանը ներկա էին տ. Սիոն, տ. Կոմիտաս, տ. Արսեն սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների և իրավագիտական հանձնաժողովների անդամները, Մայր Աթոռի ղեկավար աշխատողներ և բաժնի վարիչներ, ինչպես նաև այլ հրավիրյալներ, որոնց թվում՝ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող լիբանանահայ հասարակական ծանոթ գործիչ պրոֆ. Բարունակ Թովմասյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Հանդիսությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսության բացումը կատարեց Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը՝ նշելով Մայր Աթոռի գործունեության մեջ այս նոր միջոցառման նշանակությունն ու կարևորությունը՝ Մայր Աթոռում կատարվող աշխատանքները է՛լ ավելի կազմակերպված և արդյունավետ կերպով առաջ տանելու գործում:

Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը ներկայացրեց Վեհափառ Հայրապետի հավանությամբ և Գերագույն հոգևոր խորհրդի որոշումով շքանշան և օրհնության կոնդակ ստացողների անունները՝ նշելով յուրաքանչյուրի կատարած օգտակար, բարեխիղճ և անձնվեր աշխատանքը:

«Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն շքանշանը սահմանված է պարգևատրելու համար հայ մշակույթի անդաստանում, հայ դպրության և կրթության ասպարեզում երկար տարիների բեղուն և օգտակար վաստակ ունեցող կրթական մշակներին:

Ամենայն Հայոց Հայրապետի 1978 թվականի դեկտեմբեր 3 թվակիր կոնդակով, ի գնահատումն երկար տարիների արդյունաշատ աշխատանքի, ինչպես նաև իբրև վաստակավոր դասախոս հոգևոր ճեմարանի և երկարամյա խմբագիր Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի, վերոհիշյալ շքանշանով պարգևատրվեց **Արթուն Հատիտյանը:**

Նույն շքանշանով պարգևատրվեց նաև հոգևոր ճեմարանի դասախոս և Մայր Աթոռիս առընթեր Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար **Պարգև Շահբազյանը,** ի գնահատումն երկար տարիների իր կրթական արդյունաշատ աշխատանքի հոգևոր ճեմարանից ներս:

«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն շքանշանը հաստատվել է Մայր Աթոռում և եկեղեցական մեր բոլոր թեմերում քսան և ավելի տարիների եկեղեցանվեր թեմական, վարչական, շինարարական և հասարակական անձնվեր աշխատանքի վաստակ ունեցող անձանց պարգևատրելու համար:

Այս շքանշանով պարգևատրվեցին (հետ մահու) մեծատաղանդ ճարտարապետ հանգուցյալ **Միքայել Մազմանյանը,** իբրև Մայր Աթոռիս առընթեր ճարտարապետների հանձնաժողովի հմուտ և հեղինակավոր նախագահ, ինչպես նաև տաղանդաշատ ճարտարապետ հանգուցյալ **Ռաֆայել Իսրայելյանը,** իբրև անդամ վերոհիշյալ հանձնաժողովի, որոնք ավելի քան քսան տարի հասարակական կարգով իրենց սրտագին մասնակցությունն են բերել Հայոց շինարար Հայրապետի՝ եկեղեցիների վերանորոգման և վանքերի բարեզարդման ծրագրերի իրագործմանը:

«Ս. Ներսես Շնորհալի» շքանշանները և Հայոց Հայրապետի դեկտեմբեր 3 թվակիր կոնդակները այս առթիվ հանձնվեցին հանգուցյալների այրիներին՝ տիկին Վարդուհի Մազմանյանին և տիկին Սոֆիկ Իսրայելյանին:

Նույն շքանշաններով պարգևատրվեցին նաև, իրենց քսան և ավելի տարիների բարեխիղճ և աթոռանվեր աշխատանքների համար՝

ա) **Արծրուն Գալիկյանը** (գլխավոր ճարտարապետ Մայր Աթոռի և շինարարական աշխատանքների ղեկավար),

բ) **Գառնիկ Քեհյայանը** (Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական բաժնի ղեկավար),

գ) **Հայկ Առաքելյանը** (Մայր Աթոռի նախկին դիվանապետ),
դ) **Եփրեմ Ալեքսանյանը** (Մայր Աթոռի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ):

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Հանդիսության ժամանակ Հայոց Հայրապետի 3 դեկտեմբեր թվակիր հայրապետական օրհնության կոնդակներին, ջերմ շնորհակալությանը և գնահատանքին արժանացան ավելի քան քսան տարի Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի աշխատանքներին իրենց օգտակար և շնորհակալ մասնակցությունը բերած մի շարք ճարտարապետներ:

Հայրապետական օրհնության կոնդակների արժանացան նաև Մայր Աթոռի վարչա-տնտեսական բաժնի վարիչ **Անդրանիկ Ուրուշյանը** և Մայր Աթոռի փոխադրական միջոցների բաժնի վարիչ **Լևոն Խոջամիրյանը:**

«ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿ» ԿՈՉՄԱՆ ԾՆՈՐՀՈՒՄ

Գերագույն հոգևոր խորհրդի 1978 թվականի դեկտեմբերի 1-ի նիստի որոշման համաձայն, ս. Էջմիածնի հոգևոր Ճեմարանում ավելի քան քսան տարիների դասախոսական և դաստիարակչական արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի համար, Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակներով, ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿ-ի կոչման արժանացան՝

ա. **Տ. Հովհաննես ավագ քահանա Մարուքյանը** (տեսուչ հոգևոր ճեմարանի),
բ. **Արթուն Հատիտյանը** (ավագ դասախոս հոգևոր ճեմարանի),
գ. **Պարգև Շահբազյանը** (ավագ դասախոս հոգևոր ճեմարանի):

Շքանշանների և օրհնության կոնդակների արժանացողները բոլոր ներկաների խանդավառ ծափերի ներքո աջահամբույրով ստացան իրենց շքանշաններն ու օրհնության կոնդակները:

Այս առթիվ տ. Հովհաննես ավագ քահանա Մարուքյանին շնորհվեց վարդապետական լանջախաչ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Հանդիսության ավարտին Հայոց Հայրապետը շնորհավորության և օրհնության հետևյալ սրտառուչ խոսքն ուղղեց շքանշանակիրներին և օրհնության կոնդակների արժանացողներին:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
(3 դեկտեմբերի 1978 թ.)

Այս առթիվ Մենք կուզենայինք ավելացնել Մեր կողմից էլ մի քանի խոսք:

«Փորձեցինք ձեզ ներշնչել անկեղծ հավատք առ Աստված, նվիրում դեպի մեր բազմադարյան ս. եկեղեցին, պաշտամունքը ամենայն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածնին, սեր և ծառայելու զգացում դեպի հայ ժողովուրդը և հայրենիքը, աշխատելու եռանդ, առանց ծուլության, առանց արծաթասիրության, առանց բամբասանքի, առանց նախանձի, առանց գողության և առանց այլ տկարությունների:

...Դուք, սիրելի վարդապետներ, բախտավոր սերունդ եք. եկաք ճիշտ ատենին, ձեր ձեռքերի մեջ առնելով եկեղեցական իշխանության գավազանը, շատ երիտասարդ հասակի մեջ:

...Այս իրողության մեջ, դուք պիտի կարենաք գտնել ձեր փառքը կամ ձեր դժբախտությունը, ձեր դժբախտությունը՝ եթե ձեզ վստահված գործին մեջ ձախողիք և հուսախաբ անեք եկեղեցին և Մեզ, ձեր փառքը՝ եթե ձեր գործը կատարեք պատվով և շինարար արդյունքներով: Աշխատանքը ձեզ պիտի ազնվացնի, ձեզ պիտի բարձրացնի, ձեզ պիտի փառավորի:

Մենք, հավատքի վերածնունդի այս օրերուն, «բարվոք պատերազմ»-ը սկսած ենք մղել մեր հուսացյալ ժողովուրդի ծոցին մեջ: Այս օրերին և ա՛յստեղեն կսկսի մի նոր շրջան մեր եկեղեցական պատմության մեջ: Դուք, որպես Մեր գործակիցները, Մեզ հետ միասին վկաները պիտի լինեք Մեր հաղթանակին, և մի օր հպարտությամբ պիտի հիշեք, թե դուք ևս ներկա էիք այստեղ, այս ճակատամարտին, և մաքտակից էիք Մեզ:

Ձեր կյանքի գործերով դուք պիտի կարողանաք ձեր անունները կապել շինարար ու ստեղծարար, աստվածասեր ու ազգօգուտ գործերի, որպես մշակներ առանց ամոթո: Ճանապարհը բաց է ձեր առաջ, վերցրեք ձեր խաչը և հետևեցեք Մեզ:

Բայց գիտցեք որ Մենք ձեզ չենք խոստանար ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ հանգստավետ կյանք, ո՛չ իշխանություն, ո՛չ մեծարանք և ո՛չ ալ փառք: Մենք ոչինչ չենք խոստանում ձեզ, բայց ոչինչ խոստանալով, ամեն բան խոստանում ենք, այնպես, ինչպես մեծ առաքյալը Պողոս՝ ոչինչ ուներ, բայց ամեն բան ուներ»:

Այս խոսքերը Մենք արտասանել ենք 1956 թ. հոկտեմբերի 6-ին Մայր տաճարում, Իջման սեղանի առաջ, իբրև խրատական խոսք այն ժամանակվա մեր երիտասարդ հոգևորականներին:

Գիտեք, Ավետարանի մեջ մի նշանավոր առակ կա, Հիսուսի առակներից մեկը, այսպես կոչված՝ «Սերմնացան»-ի առակը: Հիսուս պատմում է, թե Սերմնացանը դուրս է գալիս սերմեր ցանելու: Կան հատիկներ, որոնք ընկնում են ապառաժ քարի վրա և շուտով չորանում են ու խարդյունք չեն տալիս. ուրիշները ընկնում են ճանապարհի վրա, մարդիկ կոխկրտում են, և նրանք փչանում են. ուրիշ հատիկներ ընկնում են պարարտ հողի վրա և արմատ են գցում, աճում, զարգանում են արևի տակ և տալիս են մեկի տեղ 30, 60 և 100 բերք:

Մարդկային կյանքում Սերմնացանի այս առակը, Հիսուսի օրերից մինչև այսօր, պահպանում է իր այժմեությունը: Նաև մարդկային կյանքում նույնն է կատարվում: Կան մարդիկ, որոնց հոգում սերմանված սերմերը չեն աճում, չեն զարգանում: Բայց և կան մարդիկ, որոնց հոգում սերմերը աճում են ու ծաղկում և բազում արդյունքներ տալիս:

Մեր պարագային էլ այդպես եղավ: Մեր հոգևորականներից շատերը Մեզ լավ հասկացան, և Մեր խոսքերը նրանց հոգիներում պարարտ հող գտան, ու նրանցից շատերը մինչև հիմա ազնվորեն աշխատում են մեր եկեղեցիներում կամ Մայր Աթոռում, ոմանք բարձր աստիճանների են հասել: Բայց ուրիշներ այդ ճանապարհով չկարողացան ընթանալ, Մեր խոսքերը նրանց հոգիների մեջ արմատ չգցեցին, և երբեմն ծանր հուսախաբություններ ունեցանք, մանավանդ վերջին 2—3 տարիների ընթացքում, երբ երկու դժբախտ պարագաներ Մեզ խորապես վշտացրին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐՈՎ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՎԵՀԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿ ՏԱՆՈՂ ՄԱՐՄԱՐԱԿԵՐՏ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԱՌԱՋ (3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1978 Թ.)

Քսաներկու տարիներ առաջ խոստացված Մեր խոսքերը փաստորեն ուղղված էին ոչ միայն երիտասարդ հոգևորականներին, այլ նաև Մեր աշխարհական գործակիցներին, որոնք Մեզ լավ հասկացան բարեբախտաբար և ահա այսօր արժանացան Գերագույն հոգևոր խորհրդի և կաթողիկոսի հայրապետական գնահատանքին: Մենք պետք է ամենայն անկեղծությամբ և վճռականությամբ ասենք, որ եթե Մենք այս 28 սպարիների ընթացքում, իբրև կաթողիկոս, բարեկարգման ու շինարարական գործեր կարողացանք իրագործել մեր աշխատանքի բոլոր բնագավառներում, այդ պարտական ենք ոչ միայն Մեր հոգևորական գործակիցներին, այլ հավասար չափով նաև Մեր աշխարհական գործակիցներին: Ասվում է և ճիշտ է երևի, որ այսօրվա կաթողիկոսը բախտավոր կաթողիկոս է: Այդ բախտավորության մեջ կարևոր տեղ է գրավում նաև այն իրողությունը, որ Մայր Աթոռի շուրջ, Մեր շուրջ համախմբվեցին նաև մի շարք ազնիվ, աշխատասեր, ձեռնհաս, նվիրված աշխարհական անձեր, որոնց այսօր հայտնում ենք Մեր գնահատանքը, Մեր շնորհակալությունը և Մեր օրհնությունը:

Մաղթում ենք բոլորին քաջառողջություն և հավատում ենք, որ Մայր Աթոռում աշխատողը ավելի պիտի ապրի և միշտ առողջ պիտի մնա: Ապացույց, որ այսօր էլ քսան և ավելի տարիներ հետո բոլորն էլ երիտասարդական ավյունով, միշտ ներշնչումով և նվիրվածությամբ շարունակում են աշխատել:

Մաղթում ենք, որ մեր գործակցությունը երկար տևի, գոնե ինչքան որ կաթողիկոսը ապրի, հետո էլ Աստուծո կամքն է: Կաթողիկոսը բավական առողջ է առայժմ և հույս ունի, թե տակավին կարող կլինի իր աշխատանքը շարունակելու: Հետևաբար Մենք կոչ ենք անում ձեզ բոլորիդ, որ պահեք ձեր մարմնի և հոգու ավյունը, եռանդը և աշխատելու ախորժակը, որովհետև աշխատելու ախորժակը վճռական պայմաններից մեկն է առողջության պահպանման:

Այս բարի մաղթանքներով Մենք կրկին անգամ Մեր երախտագիտությունն ենք հայտնում բոլոր նրանց, ովքեր Մեզ շրջապատեցին առաջին օրվանից մինչև այսօր՝ թե՛ Գերագույն հոգևոր խորհրդի և թե՛ վերստուգիչ հանձնախմբի անդամներին, ճարտարապետական հանձնաժողովի անդամներին, Մայր Աթոռում ու թեմերում Մեր բոլոր գործակիցներին և հոգևոր ճեմարանի դասախոսներին և տեսչության:

Թող Աստված մեզ բոլորիս իր շնորհները առատապես միշտ բաշխի, որպեսզի կարողանանք մեր պարտականությունը կատարել մեր եկեղեցու հանդեպ, մեր հավատացյալ ժողովրդի հանդեպ, մեր վերածնված մայր հայրենիքի հանդեպ: Եվ տակավին Մեր երախտագիտական խոսքն էլ պարտավոր ենք ասել այստեղ, մեր պետական իշխանություններին, որովհետև Մեր և Մեր բոլոր գործակիցների արդյունաշատ աշխատանքը, որ կատարվեց Մեր գահակալության տարիների ընթացքում, անշուշտ որ նույնը չէր լինի, եթե այլ վերաբերմունք գտնեիք մեր պետական իշխանությունների կողմից: Ընդհակառակը, գահակալության առաջին օրերից մինչև այժմ Մենք վայելեցինք մեր իշխանության աջակցությունը, բարյացակամ վերաբերմունքը, նույնիսկ խրախուսանքը և քաջալերանքը: Մեր խորագույն շնորհակալությունը մեր հայրենի կառավարության, որի ներկայացուցիչն է այստեղ, հարգարժան տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Կեցցե մեր վերածնված մայր հայրենիքը:

Կեցցե մեր պաշտելի աստվածակառույց սուրբ Էջմիածինը ամենայն հայոց: Ամեն:

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՕՐՎԱ. ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ

Նույն օրը, ժամը 15.30-ին, մայրավանքի միաբանական սեղանատանը, օրվա հանդիսության առիթով, կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն՝ ավելի քան 70 հոգու մասնակցությամբ:

Հանդիսությանը և ճաշկերույթին ներկա էին նաև շքանշան ստացողների և օրհնության կոնդակի արժանացողների հարգելի տիկինները, ինչպես նաև տեր և տիկին Բարունակ Թովմասյանը:

Հրավիրյալների թվում էր նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը:

Ճաշկերույթի բացումը կատարեց տ. Սիոն արքեպիսկոպոսը՝ բաժակ առաջարկելով Հայոց Հայրապետի կենացը:

Այնուհետև Հայոց Հայրապետին ուղղյալ խորին շնորհակալության և որդիական երախտագիտության խոսք ասացին Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբազյանը, պրոֆ. Վարազդատ Հարությունյանը, տ. Հովհաննես ավագ քահանա Մարուքյանը և Հայկ Առաքելյանը:

Օրվա հանդիսության ժամանակ շքանշաններով պարգևատրվողներին և օրհնության կոնդակի արժանացողներին շնորհավորության ջերմ խոսքեր ուղղեցին և Հայոց Հայրապետի արևշատության և Նրա ապագա եկեղեցանվեր ու հայրենաշեն գործերի հաջողության համար սրտագին բարեմաղթություններ արեցին Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամ ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը, պրոֆ. Բարունակ Թովմասյանը, Մայր Աթոռին առընթեր իրավագիտական հանձնաժողովի անդամ դոկտ., պրոֆ. Գևորգ Խրոլոպյանը:

Ճաշկերույթն ավարտվեց խանդավառ և ջերմ մթնոլորտում Հայոց Հայրապետի հետևյալ խոսքով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՓԱԿՄԱՆ ԽՈՍՔԸ
(3 դեկտեմբեր 1978 թ.)

Պատմական այս օրը իր վախճանին հասավ: Իրոք հոգեպարար, ոգեշնչված պահեր ապրեցինք այս մի քանի ժամերի ընթացքում: Կարծեք Մեր աչքի առջև ֆիլմի ժապավենի նման արագ անցավ քսաներեք տարիների Մեր և Մեր աշխատակիցների գործունեության շքերթը: Թեև դերակատարները մենք ենք, սակայն մենք մոռանում ենք անցյալը, և լավ է, որ այսպիսի առիթներ ստեղծվեն, և մտքով դեպի ետ գնանք և վերստին այդ անցյալ ճանապարհը կտրենք մեր հիշողության մեջ ու անդրադառնանք, որ Աստուծո օգնությամբ և նպաստավոր պայմանների բերումով, մեր պետության բարյացակամ վերաբերմունքով, մեր ժողովրդի բարոյական և նյութական առատ օժանդակությամբ մենք բոլորս ձեռք-ձեռքի տված կարողացանք կենսագործել գրեթե մեր բոլոր նախատեսությունները և ծրագրերը: Ունենք

դեռևս նոր ծրագրեր բնականաբար: Իրագործումների շրջանը երբեք չի ավարտվում, մանավանդ մեզ նման ժողովրդի և եկեղեցու համար, որ անցյալում տևապես քարուքանդ են եղել, կողոպտվել, հաղածվել ու ավերվել: Մեր ժողովուրդը, սակայն, վերջին 50—60 տարիների ընթացքում կարողացավ կամաց-կամաց իր ուժերը հավաքել, իր վերքերը բուժել, և այսօր հրաշքի համազոր, վերաշինված մի հայրենիք ունենք, որ սակայն մինչև հիմակվա հսկայական իրագործումներով չի բավարարված, ձեռնածալ չի նստում, այլ ձգտում է ավելին իրագործել և լավ է, որ այդպես է: Ահա այս վերածնունդի և վերաշինության ճանապարհի վրա մեր եկեղեցին նույնպես, ի գլուխ ունենալով Մայր Աթոռ ս. Էջմիածինը, վերջին տասնամյակներին կարողացավ վերագտնել ինքզինքը և վերակառուցել իր կյանքը: Եվ ինչպես հայրենիքի ղեկավարները և աշխատողները չեն բավարարվում եղածով և ձգտում են դեպի ավելին, կարծում ենք նույն տեսիլքով պետք է Մենք ևս ղեկավարվենք և շարունակենք մեր գործունեությունը, մեր աշխատանքը նույն ոգևորությամբ, նույն եռանդով, որով սկսեցինք, սրանից քսաներեք տարիներ առաջ:

Թող Աստված միշտ մնա մեզ օգնական և մարտակից, պետությունն էլ մեզ աջակից, որպեսզի միշտ հառաջ ընթանանք մեր առաքելության ճամփու վրա, մինչև աստվածադիր ժամկետ, երբ մենք հրաժեշտ պիտի տանք կյանքին, երբ պետք է գան մեզանից հետո մեր հաջորդները, որոնք նույնպես շատ գործ պիտի ունենան դեռևս անելու:

Հավետ լույս և փառք սրբություն սրբոց սուրբ Էջմիածնին:

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ», «Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ» ԵՎ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՏՎՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅԱՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը հաստատված է Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Ե Վեհափառ Հայրապետի հրամանով:

ՀՈԴՎԱԾ 2. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի չափերն են՝ 50 մմ×40 մմ: Շքանշանի ներքևում, կենտրոնում, ս. Էջմիածնի Մայր տաճարի քանդակն է՝ Արարատի ֆոնի վրա: Շքանշանի վերևի մասում հայրապետական նշանն է՝ թագով, գավազանով և խաչով: Շքանշանը եզերված է դափնու և կաղնու տերևներով:

ՀՈԴՎԱԾ 3. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը շնորհվում է հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի՝ ի նշանավորումն մեծ բարերարությունների, որոնք մատուցվում են հայ ժողովրդին և Հայաստանյայց առաքելական եկեղեցուն:

ՀՈԴՎԱԾ 4. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրվում են այն բարերարները, որոնք կարևոր միջոցներ են հատկացնում.

ա. Մայր Աթոռի, նվիրապետական Աթոռների, թեմական կենտրոնների բարգավաճման, եկեղեցիների կառուցման, հինավուրց վանքերի վերանորոգման.

բ. Համազգային նշանակություն ունեցող կրթական, մշակութային, շինարարական, բարեսիրական իրագործումների:

ՀՈԴՎԱԾ 5. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը շնորհելու վերաբերյալ առաջարկությունները քննարկում է Գերագույն հոգևոր խորհուրդը և իր եզրակացությունները ներկայացնում Վեհափառ Հայրապետին՝ ի հաստատումն:

ՀՈԴՎԱԾ 6. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրման ներ-

ՇՔԱՆՇԱՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»

ՇՔԱՆՇԱՆ «Ս. ՍԱՀԱԿ—Ս. ՄԵՍՐՈՊ»

ՇՔԱՆՇԱՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»

կայացնում են Մայր Աթոռը, նվիրապետական Աթոռները, թեմական իշխանությունները:

ՀՈԴՎԱԾ 7. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը հանձնելու հանդիսավոր արարողությունը կատարվում է Վեհարանում, Վեհափառ Հայրապետի ձեռամբ, ի ներկայության Գերագույն հոգևոր խորհրդի անդամների, հոգևորականության ներկայացուցիչների և այլ պաշտոնական հյուրերի:

ՀՈԴՎԱԾ 8. «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի շնորհման վերաբերող հայրապետական կոնդակը հրապարակվում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՅԱԼՈՒԹՅԱՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը հաստատված է Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հրամանով:

ՀՈԴՎԱԾ 2. «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանի չափերն են՝ 50 մմ×42 մմ: Շքանշանի կենտրոնում ս. Էջմիածնի Մայր տաճարի քանդակն է՝ Արարատի ֆոնի վրա: Շքանշանի աջ և ձախ կողմերում կանգնած են ս. Սահակը և ս. Մեսրոպը՝ ձեռքերում բռնած Աստվածաշունչ Մատյանը, որի երկու երեսների վրա քանդակված են հայոց այբուբենի «Ա» և «Բ» տառերը: Շքանշանը եզերված է բոլորաձև զարդաքանդակներով: Շքանշանի ներքևում քանդակված է՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ»:

ՀՈԴՎԱԾ 3. «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանը շնորհվում է հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի, հայ եկեղեցու և ժողովրդի մշակույթի զարգացմանը մատուցված նշանակալից ծառայությունների համար:

ՀՈԴՎԱԾ 4. «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվում են գիտության, գրականության, կրթության և արվեստի տարբեր բնագավառների մշակներ:

ՀՈԴՎԱԾ 5. «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանը շնորհելու վերաբերյալ առաջարկությունները քննարկում է Գերագույն հոգևոր խորհուրդը և իր եզրակացությունները ներկայացնում Վեհափառ Հայրապետին՝ ի հաստատումն:

ՀՈԴՎԱԾ 6. «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրման ներկայացնում են Մայր Աթոռը, նվիրապետական Աթոռները և Հայաստանում ու սփյուռքում գործող մշակութային կազմակերպությունները ու հաստատությունները՝ թեմական իշխանությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 7. «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանի հանդիսավոր հանձնումը կատարվում է Վեհափառ Հայրապետի ձեռամբ կամ, բացառիկ պարագաներում՝ Վեհափառ Հայրապետի կողմից լիազորված ներկայացուցչի ձեռամբ:

ՀՈԴՎԱԾ 8. «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանի շնորհմանը վերաբերող հայրապետական կոնդակը հրապարակվում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ՏՎՉՈՒԹՅԱՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանը հաստատված է Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հրամանով:

ՀՈԴՎԱԾ 2. «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի չափերն են՝ 50 մմ×40 մմ: Շքանշանի կենտրոնում ս. Էջմիածնի Մայր տաճարի քանդակն է՝ Արարատի ֆոնի վրա: Շքանշանի վերևում աղավնակերպ ս. Հոգին իր լույսի ճառագայթներն է ցոլարձակում Մայր տաճարի վրա: Շքանշանի ներքևի մասում քանդակված են երկու արծիվներ, որոնք իրենց վրա են կրում Մայր տաճարը: Շքանշանը եզերված է զարդաքանդակներով: Շքանշանի ներքևում քանդակված է՝ «Ս. Ներսես Շնորհալի»:

ՀՈԴՎԱԾ 3. «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանը շնորհվում է հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի՝ ի գնահատումն բազմամյա բեղմնավոր աշխատանքի, որ կատարվում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի, նվիրապետական Աթոռների, Հայաստանում և սփյուռքում գործող Հայաստանյայց առաքելական եկեղեցիների և եկեղեցական կազմակերպությունների պայծառացման համար:

ՀՈԴՎԱԾ 4. «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրվում են.

ա. Մայր Աթոռում և նվիրապետական Աթոռներում գործող վարչական մարմինների անդամներ և պատասխանատու պաշտոնյաներ.

բ. Թեմական խորհուրդների, եկեղեցական վարչությունների և նրանց առընթեր մշակութային, կրթական, բարեսիրական կազմակերպությունների անդամները:

ՀՈԴՎԱԾ 5. «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանը շնորհելու վերաբերյալ առաջարկությունները քննարկում է Գերագույն հոգևոր խորհուրդը և իր եզրակացությունները ներկայացնում Վեհափառ Հայրապետին՝ ի հաստատումն:

ՀՈԴՎԱԾ 6. «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրմանը ներկայացնում են Մայր Աթոռը, նվիրապետական Աթոռները, թեմական իշխանությունները:

ՀՈԴՎԱԾ 7. «Ս Ներսես Շնորհալի» շքանշանի հանձնումը կատարում է Վեհափառ Հայրապետը կամ համապատասխան թեմի թեմական առաջնորդը՝ պատշաճ հանդիսությամբ:

ՀՈԴՎԱԾ 8. «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի շնորհմանը վերաբերող հայրապետական կոնդակը հրապարակվում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՄԱՆՈՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մի տարի էլ անցավ պատմության գիրկը:

Անցնող տարին Մայր Աթոռի համար դարձյալ եղավ աշխատանքի, կառուցումների, աղոթքի և հաջողությունների տարի:

Անցնող տարում, հոկտեմբերյան օրերին, համազգային հանդիսավորությամբ Մայր Աթոռում նշվեց Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակը, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը և Կ. Պոլսի երջանկահիշատակ տ. Հովհաննես Կոլոտ մեծավաստակ պատրիարքի ծննդյան 300-ամյակը:

Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, Հայոց Հայրապետի օրհնության ու ղեկավարության ներքո, բարի արդյունքներով փակեցին 1978 թվականը և վառ երազներով ու հավատքով, հույսով ու ստեղծագործ աշխատանքի նոր եռանդով լցված բաց են անում 1979 թվականի սպիտակ մատյանը, որը պետք է լցվի հոգևոր ու եկեղեցաշեն, մշակութային ու հայրենանվեր նոր աշխատանքներով:

Նոր տարի է: Ամանոր: Կրկին հավաքվել ենք միաբանական այս հարկի տակ՝ ուրախությամբ ճանապարհելու 1978 թվականը և ողջունելու 1979 թվականի այգաբացը:

Ամանորի այս հանդեսին նախագահում է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով, Գերագույն հոգևոր փոխհրդի անդամներով, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմով և ուսանողությամբ ու Մայր Աթոռի պաշտոնեության ներկայացուցիչներով:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված տ. Սիոն, տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Նարեկ, տ. Գևորգ արքազաններով: Ամանորի սեղանները ծանրաբեռնված են Մայր Աթոռի բարիքներով: Ամեն կողմ՝ ամանորյա տոնական հանդիսություն և խանդավառություն:

Հոգևոր ճեմարանի սաները, օրվա տոնի խորհրդով ոգևորված, ճեմարանի եվրոպական երաժշտության դասախոս և հանրապետության վաստակավոր արտիստ Խորեն Մեյխանեջյանի ղեկավարությամբ խանդավառությամբ կատարում են ճեմարանի քայլերգը, «Գարուն Երևան», «Սեղանն է առատ», ապա Կոմիտաս վարդապետի «Հարայ էլի», «Ով հայկազունք» ու «Իմ չինարի յարը» խմբերգերը:

Այնուհետև Ամանորի իմաստը խորհրդանշող բովանդակալից արտասանություններով հանդես են գալիս հոգևոր ճեմարանի ուսանողները: Վաչագան սրկ. Ավետիքյանը արտասանում է Գեղամ Սարյանի «Օրացույց»-ը, Հրաչ սրկ. Օղլուգյանը՝ Միսաք Մեծարենցի «Տուր ինձի, Տեր»-ը, Հովսեփ սրկ. Պալըգյանը՝ Դանիել Վարուժանի «Անդաստան»-ը, Վարդան Մկրտչյանը անգլերեն լեզվով արտասանում է Ռոբերտ Պրնչի «Իմ սիրտը լեռներում է»-ն, իսկ Արա Տաքեսյանը ռուսերենով՝ Լերմոնտովի «Տուչի»-ն:

Հայոց Հայրապետի Նոր տարին շնորհավորում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը, որը համառոտակի կանգ է առնում անցնող տարվա ընթացքում Հայոց Հայրապետի եկեղեցաշեն, հայրենաշեն, մշակութային և հայրենասիրական գործունեության վրա և մասնավոր կարևորությամբ շեշտում Վեհափառ Հայրապետի «հայրական վերաբերմունքը հոգևոր ճեմարանի հանդեպ»:

Տեսուչ տեր՝ հայրը նշում է, «որ այս տարի մեր նախկին ուսանողներից հինգը՝ Սորին սրկ. Մանդալյան, Կիրակոս սրկ. Հովնանյան, Բյուզանդ սրկ. Գալալյան, Դերենիկ սրկ. Սայան և տ. Թադեոս քհն. Ավագյան, ապրիլ ամսին պաշտպանեցին իրենց դիպլոմային աշխատանքները, որից երեքը՝ Ավետիք աբդ. Մանդալյան, Կոմիտաս աբդ. Հովնանյան և տ. Թադեոս քհն. Ավագյան,

արդեն նվիրված են եկեղեցուն, որպես հոգեվորականներ:

Մայիսի 27-ին, ս. Գրիգոր Լուսավորչի «Ելն ի վիրապէն» տոնի օրը, Գ լսարանի ութ ուսանողներ սարկավագ ձեռնադրվեցին և Բ լսարանի չորս ուսանողներ ստացան ուրար կրելու իրավունք: Ուրախալի է նաև, որ համալրվում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբանության շարքերը: Մեր նախկին ուսանողներից Հովհաննես սրկ. Գրվրգյանը և Բյուզանդ սրկ. Գալայջյանը դեկտեմբերի 24-ին ձեռնադրվեցին կուսակրոն քահանաներ՝ վերանվանվելով Մյուռոն և Առաքել աբեղա:

Այս Նոր տարվա ուրախ, հուզիչ առիթով թույլ տվեք, Վեհափառ Տեր, շնորհավորել Ձեր Նոր տարին, շնորհավորել Մայր Աթոռ ս. Էջմիածնի սիրելի միաբանության, դասախոսական կազմի, աշխատավորության Նոր տարին: Մաղթում ենք Ձեզ բազում առողջ նորանոր տարիներ՝ Էջմիածնի պատմության փառքի համար, մեր եկեղեցու պայծառության համար»:

Հանուն հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, Հայոց Հայրապետի Նոր տարին շնորհավորում է հոգևոր ճեմարանի վաստակավոր դաստիարակ և «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանակիր պրն. Պարգև Շահբազյանը:

«Վեհափառ Տեր,

Մայր Աթոռի կյանքում գեղեցիկ ավանդույթ է դարձել ամեն տարի, դեկտեմբերի 31-ի գիշերը, Ձերդ Վեհափառության գըլխավորությամբ, հավաքվել Մայր Աթոռի միաբանական այս սեղանատանը, շքեղորեն զարդարված տոնածառի պսպղուն լույսերի ներքո և հայրենական բարիքներով ծանրաբեռնված սեղանների շուրջ՝ միասնաբար դիմավորելու Նոր տարին ուրախ տրամադրությամբ:

Հաճախ հարց եմ տվել ինքս ինձ. ինչո՞ւ են մարդիկ սովորաբար ուրախանում այս օրը. ավելի տրամաբանական չէ՞ր, որ տխրեին: Չէ՞ որ տարեմուտի գիշերը մի տեսակ անցյալը ապագայից սահմանազատող այն հանգրվանն է, այն կետը (գոնե պայմանականորեն այդպես է ընդունված), որի վրա կանգնած՝ մարդիկ մի կողմից հետադարձ մի հայացքով անդրադառնում են իրենց անցյալ կյանքին, իսկ մյուս կողմից՝ դեմ-հանդիման կանգնում անընտույգ մի ապագայի առաջ: Արդ, անդրադարձը սեփական անցյալը միշտ էլ բնական մի տխրության, թախիծի, մի տեսակ ափսոսանքի զգացումով է համակում մարդուն ոչ միայն նրա համար, որ այդ անցյալը գումարն է մարդուս կյանքից վերջնականապես խլված, կրճատված, սպառված օրերի, այլ նաև նրա համար, որ այդ օրերը լցնող բոլոր գեղեցիկ ապրումները, հույզերը, ձգտումները այլևս երբեք չեն կրկնվելու, անդառնալի են որպես հավետ չքացած ներքին հարստություններ:

Այսպես է անհատական կյանքի տեսանկյունից: Իսկ ապագայի անհայտության դիմաց մարդուս համակող տիրական զգացումը դարձյալ տխրության առիթ տվող ճնշող անհանգստությունն է, քանի որ ապագան միշտ չէ, որ մարդուն վերապահում է հաջողություն ու երջանկություն, երբեմն նաև՝ ձախորդություններ, անակնկալ դժբախտություններ: Եվ սակայն, հակառակ այս իրողության, Ամանորի նախօրյակին մարդիկ զարմանալիորեն ուրախանում են, ճիշտ այնպես, ինչպես գրավիչ ճանապարհորդությունների նախօրյակին՝ առանց անդրադառնալու, որ այդ ճանապարհորդությունները կարող է երբեմն անսպասելի դժվարությունների ու անախորժությունների առջև դնել իրենց:

Դրա պատճառը գուցե կյանքի, գալիքի նկատմամբ մարդու բնածին լավատեսությունն է: Գուցե նաև այն, որ Նոր տարին իր մեջ ունի հավետ վերանորոգվող կյանքի խորհուրդը: Եվ մարդիկ, որպես հասարակական էակներ, բնազդաբար, տարերայնորեն անձնատուր են լինում այդ վերանորոգվող կյանքի ռիթմին և ուրախանում:

Այդ ընդհանուր ուրախությանը այսօր մասնակից ենք նաև մենք: Սակայն մեր ուրախությունը գիտակցված ուրախություն է: Մենք բոլորս՝ Մայր Աթոռի միաբաններ, պաշտոնյաներ, դասախոսներ և ուսանողներ, ուրախանում ենք և մխիթարված ու հպարտ, որ անցնող տարին, Ձերդ Սրբության ղեկավարության ներքո, Մայր Աթոռի համար եղավ արդյունավետ իրադարձություններով հարուստ շինարար գործունեության մի տարի: Ձեր հովվապետական այցելությունը Լոնդոն և Ժնև այս տարվա հունիս ամսին և Ձեր ունեցած հանդիպումներն ու շփումները տեղի ազգային շրջանակների հետ, Ձեր արտասանած քարոզներն ու ճառերը ջերմացրին և խանդավառեցին այդ երկրներում ապրող մեր ժողովրդի բազմահազար զավակների սրտերը՝ ամրապնդելով նրանց հոգևոր կապերը ս. Էջմիածնի և մայր հայրենիքի հետ: Լոնդոնում Ձեր հովանավորությամբ բացումը կատարվեց «Հայ երաժշտական ինստիտուտ»-ի, որ մի նոր, նշանակալից երևույթ է սփյուռքահայության կյանքում: Ժնևում Դուք պաշտոնական հյուրը եղաք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, և Ձեր այցելությունը միջեկեղեցական այդ մեծ կազմակերպության կենտրոնին՝ առավել բարձ-

բացրեց հայ եկեղեցու հեղինակությունը միջազգային մակարդակի վրա: Այս տարի էր դարձյալ, որ ծրագրվեց հիմնադրումը Ժնևում ԵՀԽ-ին առընթեր հայ եկեղեցու էկումենիկ մի կենտրոնի (այդ ուղղությամբ արդեն կարևոր քայլեր առնված են), որը կոչված է առավել ընդլայնելու և ամրացնելու հայ եկեղեցու և Մայր Աթոռի էկումենիկ կապերը քույր եկեղեցիների հետ:

1978 թվականի հոկտեմբերին համազգային ցնծության և խանդավառության մթնոլորտում նշվեց Ձերդ Վեհափառության ծննդյան 70-ամյակը: Այդ առթիվ մեր պետությունը Ձեզ պարգևատրեց «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով՝ բարձր գնահատելով Ձեր հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունը:

Նույն ամսին Մայր Աթոռում հանդիսավոր իրադրության մեջ նշվեց Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը, ինչպես նաև Կ. Պոլսի երջանկահիշատակ Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակը:

Անցնող տարվա ընթացքում ավարտվեց արդիական հարմարություններով կառուցված Մայր Աթոռի նոր վանատունը:

Մայր տաճարում տեղի ունեցան քահանայական ձեռնադրություններ, Մայր Աթոռի միաբանությունը համալրվեց կուսակրոն երիտասարդ և խոստումնալից նոր հոգևորականներով:

Վերջերս Մայր Աթոռի աշխատակիցներից և Ձեր մերձավոր աշխարհական գործակիցներից ոմանք իրենց կրթական, դաստիարակչական, եկեղեցաշնվեր բազմամյա աշխատանքի և ծառայությունների համար պարգևատրվեցին «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշաններով: Ահա այս և նման բազում այլ արդյունավետ, շինարար գործերով նշանավորվեց անցնող տարին Մայր Աթոռի կյանքում:

Այս բոլորը ոչ միայն մխիթարում են մեզ և ուրախությամբ լցնում մեր սրտերը, այլև մեզ մղում են առավել լավատես լինելու Մայր Աթոռի պայծառ ապագայի նկատմամբ:

Վեհափառ Տեր, Ձեր գահակալության ավելի քան երկու տասնամյակների ընթացքում Մայր Աթոռը դարձավ ստեղծագործ եռուն աշխատանքով ապրող ու շնչող բազմաճյուղ հոգևոր մի հաստատություն: Այդ հաստատության մեջ իր առանձնակի տեղն ունի հոգևոր ճեմարանը, որը, ինչպես ընդունված է ասել, հոգևոր նոր սերնդի պատրաստման դարբնոցն է և, որպես այդպիսին, հանդիսանում է Մայր Աթոռի կենդանի զարկերակը: Այդ տեսակետից մեր՝ հոգևոր ճեմարանի դասախոսներիս վրա ծանրանում է լուրջ և պատասխանատու աշխատանք: Մեր գործը կրթականից ավելի՛ մի իմաստ ունի: Մենք կոչված ենք մեր ուսանողներին տալու քրիստոնեական դաստիարակություն, հավիտենական արժեքներ գնահատելու ընդունակ, իդեալի և բարձր բարոյականի տեր մարդը կերտելու նրանց մեջ: Մեր եկեղեցին այսօր, գուցե ավելի քան երբևէ, կարիքն ունի քրիստոնեական բարոյականությամբ ներթափանցված, գաղափարական բարձր մղումներ և տեսիլք ունեցող երիտասարդ հոգևոր սպասավորների: Մենք այսուհետև էլ ջանք ու եռանդ չենք խնայելու, որպեսզի այդ ուղղությամբ Ձեր և մեր սպասումներն իրականանան, և ապագայում մեր եկեղեցին ունենա նվիրյալ, լուսամիտ, իրենց հավատի մեջ ամրապինդ, հայրենասեր ու մարդասեր Ձեզ արժանի հաջորդներ:

Այս տոնական ուրախ առիթով թույլ տվեք, Վեհափառ Տեր, հանուն հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, շնորհավորել Ձեր Նոր տարին և մաղթել, որ դեռ երկա՜ր ու երկա՜ր տարիներ ծաղկուն մնա հովվապետական գավազանը Ձեր բարի ու գործունյա ձեռքերի մեջ, որպեսզի Ձեր իմաստուն ղեկավարության ներքո աճի ու զորանա երկհազարամյա մեր Մայր եկեղեցին, որպեսզի Արարատի փեշերին, հայրենի ջերմ արևի տակ, միշտ ծաղկի ու պայծառանա Մայր Աթոռ ս. Էջմիածինը խաղաղ ու բարօր պայմանների մեջ՝ ի մխիթարություն Ձեզ և հուրախություն հավատացյալ Ձեր զավակների, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

Թող բարի և շնորհավոր լինի Ձեր Նոր տարին, Վեհափառ Տեր»:

Գ. լսարանի ուսանող Հովհաննես սրկ. Ղազարյանը, հանուն ճեմարանի ուսանողության, նույնպես շնորհավորում է Հայոց Հայրապետի Նոր տարին՝ շեշտելով.

«Ուրախության և ցնծության դրոշներ ենք ապրում այս հանդիսավոր երեկոյի առթիվ:

Ավանդության համաձայն, բոլորս, ինչպես մի մեծ ընտանիքի զավակներ, Ձերդ Սրբության գլխավորությամբ, հավաքվել ենք այս սուրբ հարկի տակ՝ հրաժեշտ տալու պատմության գիրկը անցնող հին՝ 1978 տարուն և դիմավորելու նոր՝ 1979 տարին:

Շուրջ երկու հազար տարիներ առաջ Աստուծո Որդին՝ Հիսուս Քրիստոս, եկավ աշխարհ՝ ատելության ու թշնամանքի ճահիճներում խեղդվող մարդկությանը բերելով խաղաղության լույսը՝ աստվածային սիրո պատգամը: Արդյոք մարդկությունը հասկացե՞լ է մեր Փրկչի Մարդեղության, Խաչե-

լության, Թաղման, Հարության և Համբարձման խորհուրդների իմաստները:

Այսօր էլ երկրագնդի տարբեր անկյուններում հոսում է անմեղ մարդկանց արյունը, միլիոնավոր մանուկների աչքերը ողողված են դառը արցունքներով, չեն դադարում ականջ ծակող մայրերի ողբն ու կոծը: Ինչպես միշտ, այժմ էլ մարդկությանը հարկավոր է խաղաղություն:

Վեհափառ Տեր, այս կապակցությամբ բոլորիս քաջ ծանոթ են Ձեր մեծ գործերը, որոնք կատարել ու կատարում եք հանուր մարդկության խաղաղության համար:

Շնորհավորելով Ձեր Նոր տարին, ցանկանում ենք Ձերդ Սրբությանը երկար տարիների կյանք և քաջառողջություն, որպեսզի շարունակեք Ձերդ աստվածահաճո գործը:

Իսկ մենք՝ հոգևոր ճեմարանի ուսանողներս, վստահեցնում ենք Ձեզ, Վեհափառ Տեր, որ այն սերմերը, որոնք այս սուրբ հաստատության կողմից սերմանվում են մեր հոգիների մեջ, ծիլեր կտան. «Ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարեւր»»:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, Վեհափառ Հայրապետի Նոր տարին շնորհավորեց նաև, երախտագիտությամբ և որդիական սիրով առլեցուն, տ. Կոմիտաս աբղ. Հովնանյանը:

Ամանորական սեղանների շուրջ ուրախությունն ու խանդավառությունը բազմապատկում է հոգևոր ճեմարանի «Զվարթնոց» նվագախումբը՝ կատարելով «Լո՜ւ գիշեր, սո՜ւրբ գիշեր» ծննդյան գողտրիկ երգը, ապա «Լեբլեբիջիների խմբերգը», «Հին ռումինական բալլադ», «Ծիծեռնակ», «Հին աշխարհը չեմ տեսել» և «Գալիս ես, գալիս ես» խմբերգերը:

Ամանորական սույն հանդիսությանը ներկա էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արգենտինայի հայոց տիրախնամ թեմի Կենտրոնական վարչության ներկայացուցիչ տիար Գալուստ Տեր-Մարտիրոսյանը և ամերիկահայ հոգեբան, պրոֆեսոր Հակոբ Փամբուկյանը: Հարգելի հյուրերը նույնպես սրտագին խոսքերով շնորհավորեցին Հայոց Հայրապետի և բոլոր ներկաների Նոր տարին հայրենասիրական ջերմ ու խանդավառ խոսքերով:

Նոր տարվա տոնակատարության վերջում Գ լսարանի ուսանող Խաչիկ սրկ. Խարազյանը երգիծական բնույթ կրող դիպուկ և զավեշտական կաղանդչեքներ է բաժանում գրեթե բոլոր ներկաներին՝ առաջացնելով ծիծաղ և ստեղծելով ուրախ մթնոլորտ:

Ամանորին նվիրված հանդիսության ավարտին ընդհանուր խանդավառության մեջ հրավիրվում է Հայոց Հայրապետը՝ Իր օրհնությունն ու պատգամը տալու բոլոր ներկաներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»:

Այս իմաստալից խոսքերը հիշեցինք Մենք այս պահին, որ, ինչպես գիտեք, սաղմոսներից է: Հեղինակը Դավիթ մարգարեն է, մեծ սաղմոսերգուն: «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»: Երկինքը պատմում է Աստուծո փառքի մասին: Կարծում ենք, որ այս խոսքերը հարմար է այսօր հիշել, որովհետև Նոր տարին երկնքի հետ կապ ունի, ավելի ճիշտ՝ կապ ունի երկնային մարմինների շարժումների հետ: Ինչպես գիտեք, մեր երկրագունդը արևի շուրջը մի տարվա ընթացքում մի շրջան է կատարում: Այս պահին նա գտնվում է այսպիսի մի հանգրվանի առաջ, երբ մի անգամ ևս իր շրջանը կատարեց արևի շուրջ, և սկսելու է հաջորդ շրջանը արևի շուրջ, վաղվանից սկսյալ:

Սաղմոսերգուն՝ Դավիթ մարգարեն, իր ժամանակ, այսինքն երեք հազար տարի առաջ, անշուշտ չէր պատկերացնում տիեզերքը այնպես, ինչպես այսօր մենք ենք պատկերացնում: Իր ժամանակին բոլոր մարդիկ երկինքը պատկերացնում էին մի մակերեսի վրա, հսկա մի կափարիչի նման, երկրագունդը մեջտեղը անշարժ կանգնած: Այս էր մոտավորապես պատկերացումը նաև Դավիթ մարգարեի: Իհարկե աղքատ մի պատկերացում, սակայն, այնուամենայնիվ, Դավիթ մարգարե իրավամբ հիանալով այդ հրաշալի տեսարանի վրա՝ բացականչել էր. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»: Հիմա Մենք մտածում ենք, հապա եթե Դավիթ ապրած լիներ մեր օրերին և պատկերացում ունենար տիեզերական անսահման տարածությունների, պատկերացում ունենար արեգակնային անթիվ-անհամար դրությունների, տիեզերական մարմինների շարժումների մասին, եթե նա իմանար, որ մեր արեգակնային դրությունը մեկ փոքրիկ մասն է տիեզերքի անհունության, առավել մեծ հիացումով պիտի բացականչեր. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»:

Կարծում ենք, որ գիտության մեր օրերի նորանոր նվաճումները առավել ստուգությամբ պատմում են Աստուծո փառքի մասին, տիեզերքը ստեղծող ուժի մասին: Այս գիտակցությամբ է, որ հոգևորականներս դիմավորում ենք Նոր տարին և այն հաս-

տատ համոզումով, որ գիտությունը ապագային տակավին շատ ավելի մեծ հայտնագործություններ է կատարելու, հետզհետե առավել փառավորելով անունը տիեզերքի Ստեղծողին, որովհետև ինչպես էլ որ մտածենք, մարդկորեն անհնար է խորհիլ, թե այս անսահման և ներդաշնակ տիեզերքը իր միլիոնավոր երկնային մարմինների մաթեմատիկ ճշտությամբ շարժումներով լինի պատահականության արդյունք: Նույնիսկ գիտության ճանապարհով կհասնենք տիեզերքի Ստեղծիչի, այսինքն Աստուծո գոյության գաղափարին:

Բայց Աստուծո փառքին մասին ոչ միայն նյութական տիեզերքն է պատմում, այլ նաև մարդկային կյանքի տիեզերքը: Մենք, իբրև հոգևորականներ, ավելի ենք շեշտը դնում այդ տիեզերքի վրա: Դա մարդու կյանքում և նրա գիտակցության մեջ՝ բարոյականի հրամայականի իրողությունն է, ճշմարիտի, բարու, գեղեցիկի, արդարության ու ազատության հրամայականները, մեծ գաղափարներ, որոնցով մարդ արարածը կարող է իրոք հպարտանալ:

Հիսուսի Ավետարանը ամենափառավոր հուշարձանն է մարդկային բարոյականի հրամայականին: Ծանոթ է գերմանացի փիլիսոփա Էմմանուել Քանթի խոսքը, որ իր գերեզմանի վրա արձանագրված է իբրև նրա ամենանշանակալից մտածումը, որ է՝ «Այս աշխարհում ինձ հիացնում են երկու բան՝ աստղազարդ երկինքը և մարդու հոգու մեջ բարոյականի հրամայականը»:

Այս հրամայականի դրոշակակիրներն ենք մենք հոգևորականներս: Դուք, սիրելի սաներ, այստեղ շատ առարկաներ եք սովորում, բոլոր այդ գիտելիքները օգտակար են ու անհրաժեշտ: Բայց իմացեք, որ բոլոր գիտելիքների պսակավորումը լինելու է՝ ձեր հոգիների մեջ ստեղծել բարոյականի զգացումը, բարոյականի հրամայականը:

Մեր ժամանակաշրջանում աշխարհի ամեն կողմ այդ գիտակցությունը տատանումի մեջ է, խախտումներ կան և պես-պես անկումային, ողբերգական կացություններ: Այդ բոլոր ողբերգությունների բուն պատճառը այն է, որ մարդոց մեջ տակավին անկազմակերպ է բարոյականի հրամայականը: Մենք մեր ուժերով, մեր եկեղեցու և ժողովրդի կյանքում աշխատում ենք այդ բարոյական գիտակցությունը զորացնել: Մեր հոգևոր ճեմարանը նույն հոգևոր-բարոյական նպատակի կենսագործումն է հետապնդում:

Մենք մաղթում ենք, որ մեր եկեղեցու հոգևոր սպասավորների, մեր ամբողջ ժողովրդի հոգու մեջ, մանավանդ երիտասարդության շարքերում, թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանում, կազմավորվի, աճի և ծաղկի բարոյական նկարագիրը:

Մի ժողովուրդ արժի այնքան, ինչքան կարողանում է իր զավակների կյանքով ու գործում դրսևորել ու արժեվորել բարոյականի հրամայականը իր բոլոր վեհ ու ազնիվ իրագործումներով:

Նոր տարվա ընթացքին սուրբ Հոգին թող նոր շնորհներով լուսավորի ձեզ բոլորիդ, մանավանդ ձեզ՝ երիտասարդ միաբաններիդ և ուսանողներիդ, որպեսզի առավել զորանա ու պայծառանա ձեր հոգիների մեջ բարոյական նկարագիրը:

Շնորհավորում ենք ձեր Նոր տարին հայրապետական օրհնությամբ:

Օրհնության Իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետը այս ուրախ առիթով Իր ուշադրությանն է արժանացնում 1978 թվականի ընթացքում ս. Գեղարդ վանքում կատարված եկեղեցաշեն, բարվոք և հոգևոր ծառայությունները և լանջախաչեր է շնորհում ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Եղիշե քհն. Սարգսյանին՝ վարդապետական ականակուռ լանջախաչ, քահանայական լանջախաչ՝ տ. Մովսես քհն. Ղազարյանին, տ. Գուրգեն քհն. Մուրադյանին և տ. Աթանաս քհն. Մովսիսյանին, ինչպես նաև Մայր տաճարի ծիսակատար տ. Մանուկ քհն. Մարգարյանին:

Ամանորին նվիրված հանդիսությունն ավարտվում է միաբանական սեղանատանը ժամը 23-ին՝ խմբովին երգված «Հայր մեր»-ով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՄՅՈՒՌՈՆ ԱԲԵՂԱ ԳԸՎԸԳՅԱՆ



ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 5-ին, ուրբաթ: Ծրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում հանդիսավորությամբ կատարվում են Ծրագալոյցի արարողությունները:

Հոգևոր ճեմարանի ուսանողները արարողության ընթացքում Ավագ խորանից ընթերցում են «Դանիելի գիրք»-ը, որին և հաջորդում է Ծրագալույցի պատարագը: Պատարագում է տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Ս. պատարագին ներկա է Հայոց Հայրապետը, Որը և նախագահում է ս. Ծննդյան նախատոնակի արարողությանը:

Նախատոնակից հետո Հայոց Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր և ընդունում է Մայր Աթոռի միաբանության շնորհավորանքները:

Այնուհետև եկեղեցական թափորը ուղղվում է Մայր Աթոռի սեղանատուն, որտեղ օրհնվում է Մայր Աթոռի աղն ու հացը, և միաբանությունը վայելում նավակատյաց ավանդական ճաշը:

Հունվարի 6-ին, շաբաթ: Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան:

Հայոց Հայրապետը մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում: Ս. սեղանին ապասարկում են տ. Գևորգ սրբազանը, տ. Մյուռոն և տ. Առաքել աբեղաները և Մայր Աթոռի սարկավագաց դասը:

Վանքի շրջափակը և Մայր տաճարը լիքն է ուխտավոր և բարեպաշտ հավատացյալներով:

Ս. պատարագին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի, Մայր Աթոռին առընթեր իրավաբանական հանձնաժողովի անդամներ, Մայր Աթոռի պատասխանատու պաշտոնյաներ, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արգենտինայի թեմի Կենտրոնական վարչության ներկայացուցիչ տիար Գալուստ Տեր-Մարտիրոսյանը և այլ հրավիրյալներ:

Ս. պատարագին ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով բովանդակ հայության, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, Նոր տարին և ս. Ծննդյան տոնը, խոսում է կրոնաշունչ և հայատրոփ հետևյալ քարոզը, որը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3:

Հայրապետական սույն քարոզը երեկոյան ժամը 23-ին ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հավարտ ս. պատարագի կատարվում է, ավանդական հանդիսությամբ, Ջրօրհնյաց կարգը՝ Վեհափառ Հայրապետի հանդիսապրությամբ:

Այնուհետև Նորին Սուրբ Օծությունը առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է շնորհավորանքներ ս. Ծննդյան տոնի առթիվ:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ շուրջ 40 հրավիրյալների համար:

Ճաշկերույթի ընթացքում Հայոց Հայրապետը շնորհավորում է բոլոր ներկաների Նոր տարին և ս. Ծննդյան տոնը:

Հայոց Հայրապետին, Նոր տարվա և

սուրբ Ծննդյան տոնի առիթով, ջերմորեն ողջունում է և շնորհավորում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հայոց Հայրապետին ուղղյալ որդիական երախտագիտության ջերմ խոսք է ասում նաև տիար Գալուստ Տեր-Մարտիրոսյանը՝ իրեն, որպես Արգենտինայի հայոց Կենտրոնական վարչության ներկայացուցչի, Հայոց Հայրապետի կողմից ցույց տրված հյուրասիրության և ուշադրության համար՝ հայտնելով միաժամանակ ողջ արգենտինահայության որդիական սերն ու հավատարմությունը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը, դեպի նրա արժանավոր Գահակալը և դեպի մայր հայրենիք:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետը Իր օրհնությանն ու գնահատանքին է արժանացնում ս. Հռիփսիմե վանքի վանահայր տ. Մասիս վրդ. Գալստյանի բարի ծառայությունները և նրան շնորհում վարդապետական ականակուռ լանջախաչ:

Ընդունելությունն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 23 և 24 օրերին, շաբաթ և կիրակի, կրկնակի ուրախության և հոգևոր մխիթարության օրեր եղան Մայր Աթոռ ս. Էջմիածնի համար: Այդ օրերին հոգևոր ճեմարանի նախկին շրջանավարտ Հովհաննես սրկ. Գրվրգյանը և Բյուզանդ սրկ. Գալայջյանը ստացան քահանայական ձեռնադրություն:

ԿՈՉՈՒՄ

Շաբաթ երեկոյան, կիրակամուտքի ժամերգության ավարտին, տ. Արսեն եպս. Բերբերյանի ձեռամբ կատարվում է նորընծաների քահանայական կոչման կարգը՝ խարտավիլակությամբ տ. Մասիս վրդ. Գալըստյանի:

Արարողության ընթացքում նորընծաները հանձն են առնում «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօն Աստուծոյ և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Տ. Արսեն եպիսկոպոսի՝ կոչեցյալներին ուղղած «Օրհնեսցէ զձեզ Տէր ի Սիոնէ, այն որ բնակեալն է յԵրուսաղէմ» մաղթանքից հետո, խարտավիլակ հայր սուրբը վկայում է ընծայալների մտավոր և հոգևոր բարեմասնությունների մասին՝ նրանց արժանի նկատելով քահանայական ձեռնադրության:

Խարտավիլակի վկայությանը հաջորդում է ընծայալների ուխտադրությունը՝ հետևելու և աշակերտելու Հայաստանյայց առաքելական եկեղեցու սրբազան և ուղղափառ Հայրապետներին:

Արարողության ավարտին ընծայալները հրապարակավ արտասանում են ս. Գրիգոր Տաթևացու կողմից սահմանված Հայաստանյայց եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը»՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ Հայրապետսն»:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երկու նորընծաների ձեռնադրությունը կատարվում է դեկտեմբերի 24-ին, կիրակի օրը, ս. պատարագի ընթացքում: Օրվա պատարագիչն է տ. Արսեն եպիսկոպոսը: Այսօր ևս Մայր Աթոռը ապրում է կրկին ուրախության պահեր: Բոլորի ուշադրության առարկան են դարձել նորընծաները, որոնք կամովին և գիտակից նվիրումով պատրաստ են իրենց ողջ կյանքը կապելու Մայր Աթոռ ս. Էջմիածնի ծառայության հետ:

Պատարագն արդեն սկսվել է: «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղոթքից հետո դպրաց դասը երգում է. «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» քահանայական

ՄԻ ՊԱՀ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԱՐԿԱՎԱԳԱՑ ԽՈՒՄԲԸ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՈՆԻՆ ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Տ. ՀՈՒՍԻԿ ՍՐԲԱԶԱՆԻ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆԻ
ՏԵՍՈՒՉ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆԻ ՀԵՏ

ձեռնադրության շարականը, որից անմիջապես հետո ձեռնադրյալները ծնրադիր առաջնորդվում են ս. խորանի առջև ու, դառնալով դեպի հավատացյալ խուռն բազմությանը, ձեռամբարձ, հրաժարվում են աշխարհից՝ կոչվելու համար «...ի սարկաւագութենէ ի քահանայութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն՝ ըստ վկայութեան անձանց իւրեանց և ամենայն ժողովրդեան»:

Ապա ձեռնադրյալները ծնրադիր մոտենում և բոլորվում են ձեռնադրիչ սրբազան հոր Աթոռի շուրջ: Սրբազանը իր ձեռքերը խաչաձև դնելով յուրաքանչյուր ընծայալի գլխին, արտասանում է «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» աղոթքը:

Օրհնությամբ և աղոթքով հորընծաներին շնորհվում են քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար, շուրջառ: Ապա հընչում է «Խորհուրդ խորին» քահանայական զգեստավորման մեղեդին:

Այնուհետև ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն»:

ՕԾՈՒՄ

Օծումը ձեռնադրության խորհրդի ամենահուզիչ և արտագրավ պահն է: Ձեռնադրիչ սրբազանը սրբալույս մեռոնով օծում է հորընծաների ճակատն ու ձեռքերը և նրանց շնորհում հոր անուններ: Հովհաննես սարկավագը վերանվանվում է տ. Մյուռոն քահանա և Բյուզանդ սարկավագը՝ տ. Առաքել քահանա:

Սրբալույս մեռոնի օծումից հետո հորընծայալները տալիս են իրենց առաջին օրհնությունն ու խաղաղությունը ժողովրդին: Երբ սարկավագը խորանից ձայնում է՝ «Ողջոյն տուք միմեանց, ի համբոյր սրբութեան», Մայր Աթոռի միաբանությունը բարձրանում է ս. խորան՝ ստանալու համար օծյալներից առաջին ողջույնը և այն փոխանցելու հավատացյալներին:

Քարոզի պահն է: Տ. Արսեն եպիսկոպոսը խոսում է օրվա հանդիսության նշանակության մասին խրատական մի քարոզ՝ «Այսօր զուարթացեալ և հաստատեալ... առ հասարակ... զՏէրն բարերար ընդ մեզ տեսանեմք յառաջնորդութիւն» (Ս. Վարդանի ճառից) բնաբանով:

ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 17-ին, ժամերգության ավարտին, Մայր տաճարում տեղի է ունենում երկու հորօծ քահանաների վեղարի տվչության օրհնությունը՝ ձեռամբ տ. Արսեն եպիսկոպոսի:

Դարձյալ կարդացվում են աղոթքներ և ս. գրական ընթերցումներ, որպեսզի Աստված անսասան պահի նրանց իրենց կուսակրոն կոչման և կարգի մեջ:

Ապա սրբազանը հանում է նրանց սարկավագական ջբրունը, որը խորհրդանշում է հին մարդը, և նրանց գլուխները ծածկում հայկական վեղարով՝ որպես հոգևորապես նոր ծնված մարդկանց:

Արարողության ավարտին հորընծաները առաջնորդվում են Վեհարան, ուր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը նրանց ընդունում է ուրախությամբ և, շնորհավորելով նրանց ձեռնադրությունն ու վեղարի տվչությունը, տալիս Իր հայրական օրհնությունն ու պատգամները:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն և ուրախությամբ շնորհավորում է Մայր Աթոռի երկու երիտասարդ և խոստումնալից միաբանների ձեռնադրությունը՝ այն վստահությամբ, որ նրանք կլինեն «մշակք առանց ամօթոյ» և կարդարացնեն Հայոց Հայրապետի մեծ վստահությունը և իրենց ողջ կյանքը գիտակցորեն և անսակարկ կնվիրեն հայ եկեղեցու հոգևոր սպասին ու տարիների ընթացքում իրենց սրբակրոն վարքով և անշահախնդիր ծառայությամբ կհանդիսանան հայ եկեղեցու արժանավոր և համեստ պաշտոնյաներ:



Տ. ՄՅՈՒՌՈՆ ԱԲԵՂԱ ԳԼՎԼԳՅԱՆ

Ծնվել է 1950 թվականի հուլիսի 23-ին Լիբանանի Տրիպոլի քաղաքում, արհեստավորի համեստ և հավատավոր ընտանիքում: Հոր անունը եղել է Մինաս, իսկ մորը՝ Ազատուհի:

Տ. Մյուռոն աբեղան իր ծնողների վեց զավակներից կրտսերագույնն է: Նա իր կրթությունը ստացել է տեղի Խրիմյան-Նուպարյան ազգային վարժարանում և այն ավարտել փայլուն հաջողությամբ 1962 թ.:

1963 թվականին ընդունվել է որպես ուսանող ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի:

1967 թվականի դեկտեմբերին, ս. Ստեփանոսի տոնի առթիվ, սարկավագ է ձեռնադրվել՝ ձեռամբ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի:

1969 թվականին ավարտել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը՝ փայլուն հաջողությամբ՝ ավարտական ներկայացնելով «Գիրք Սաղմոսաց»-ը՝ արժանանալով գերազանց գնահատականի:

1970 թվականի մայիսին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ուղարկվել է Բուենոս Այրես (Արգենտինա)՝ իր ուսումը շարունակելու «Էլ Սալվադոր» (Սուրբ Փրկիչ) և «Բուենոս Այրես» համալսարաններում, հետևելով աստվածաբանության, փիլիսոփայության և հոգեբանության դասընթացներին:

Տ. Մյուռոն աբեղան իր ուսման տարիներին մասնակցել է նաև Բուենոս Այրեսի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում հոգևոր ծառայության գործին որպես սարկավագ և դասավանդել միաժամանակ եկեղեցուն առընթեր ս. Գրիգոր Լուսավորիչ երկրորդական վարժարանում հայերեն, հայ եկեղեցու պատմություն և անգլերեն լեզու:

Տ. Մյուռոն աբեղան Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի խոստումնալից, ուսումնասեր և հավատավոր ուսանողներից մեկն է եղել: Հույս ունենք, որ նա իր նոր ասպարեզում նաև կլինի արժանավոր միաբան ս. Էջմիածնի և կարդարացնի Վեհափառ Հայրապետի և դասախոսների՝ իր վրա դրված վստահությունը:



Տ. ԱՌԱՔԵԼ ԱԲԵՂԱ ԳԱԼԱՅՋՅԱՆ

Տ. Առաքել աբեղա Գալայջյանը ծնվել է Բեյրութում (Լիբանան) 1957 թվականի օգոստոսի 17-ին, համեստ հայ գրաշարի հարկի տակ: Հոր անունը Սեդրակ է, իսկ մորը՝ Շաքե: Տ. Առաքել աբեղան իր ծնողների հինգ երեխաների երկրորդն է:

Նա իր նախնական կրթությունը ստացել է Բեյրութի Վահան Թեքեյանի անվան վարժարանում և այն ավարտել 1969 թվականի հունիսին:

Այնուհետև իր միջնակարգ կրթությունը շարունակել է Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան մանչերի երկրորդական վարժարանում մինչև 9-րդ դասարան:

1973 թվականին ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և այն ավարտել 1977 թվականին հաջողությամբ՝ ավարտաճառ ունենալով «Հոգևոր հովվի պարտականությունները այսօր» թեման, որի համար արժանացել է «Լավագույն» գնահատականի:

1976 թվականի դեկտեմբերին սարկավագ է ձեռնադրվել տ. Հուսիկ արքեպիսկոպոսից:

Հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո նա աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ տ. Առաքել աբեղան, Մայր Աթոռում իր քառասունքը անցկացնելուց հետո, կմեկնի Փարիզ՝ ծառայելու տեղի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում և մանավանդ իր ուսումը կատարելագործելու «Institute Catholique»-ի մեջ:

Տ. Առաքել աբեղան ևս Մայր Աթոռ ս.

Էջմիածնի հոգևոր ճեմարանի խոստումնալից և ուսումնասեր ուսանողներից է եղել: Հույս ունենք, որ նա իր ապագա հոգևորական ասպարեզում կլինի արժանավոր միաբանը Մայր Աթոռի և կարդարացնի Վեհափառ Հայրապետի և իր դասախոսների վստահությունը:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում կայացավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում խոսեց Վեհափառ Հայրապետը նոյեմբերի 29-ի 58-րդ տարեդարձի առթիվ հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումների մասին՝ մշակույթի, գիտության, արվեստի, գյուղատնտեսության, արդյունաբերության և քաղաքաշինության բնագավառներում:

Նորին Սրբությունը այս առիթով խոսեց նաև մանավանդ վերջին 23 տարիների ընթացքում Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայ եկեղեցու վերազարթոնքի մասին հայրենիքի խաղաղ և ապահով պայմանների մեջ:

Նորին Սրբությունը Իր ոգեշունչ խոսքով խանդավառեց հավաքույթի մասնակիցներին, եկեղեցական և հայրենական հաջողությունների առթիվ:

*
* *

Դեկտեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և քարոզում «Տուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ի խորութեան գիշերիս» (Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», բան ԺԲ) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում խոսք առավ տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և համառոտակի ներկայացրեց Շեքսպիրի կյանքն ու նրա «Համլետ» ստեղծագործությունը:

*
* *

Դեկտեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Բուլղարիայից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Մեսրոպ քհն. Բենլիյանը և քարոզում «Նման է արքայութիւն երկնից, հատոյ մանանխոյ զոր առեալ մարդոյ սերմանեաց յագարակի իւրում, որ փոքրը է քան զամենայն սերմանիս և յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս» (Մատթ. ԺԳ 51—52) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում սկսվեցին 1978—1979 ուսումնական տարվա կիսամյա քննությունները, որոնք կտևեն մինչև դեկտեմբերի 31-ը:

*
* *

Դեկտեմբերի 23-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետին այցելեցին Նրա նախկին ռումինահայ աշակերտները՝ շուրջ 40 հոգի, որոնք արդեն վաղուց հաստատվել էին մայր հայրենիքում, ամուսնացած, տուն-տեղ կազմած Երևանում: Նրանք եկել էին շնորհավորելու Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակը և Նոր տարին:

Ջերմ զրույցի ընթացքում խոսք առան և Հայոց Հայրապետին իրենց երախտագիտությունը հայտնեցին նախկին սաներից Սուրեն Քոլանջյանը, Հակոբ Առաքելյանը և Ավետիս Փոլատյանը, որոնք արդեն ճանաչված գիտաշխատողներ և դասախոսներ են Երևանում:

Այս առիթով Հայոց Հայրապետին նվիրվեց մի հուշանվեր՝ հետևյալ մակագրությամբ. «Վարուք առաքինի, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելու անձանձրոյթ» (Մովսես Խորենացի):

Ստեղծված սրտագին մթնոլորտում անցյալի դպրոցական քաղցր հուշերի ոգեկոչումով ուսուցիչ և աշակերտ ապրեցին անմոռանալի պահեր:

Հանդիպման ավարտին խոսք առավ Հայոց Հայրապետը, Իր գոհունակությունը հայտնեց երբեմնի Իր ուսանողների այս այցելության համար և օրհնեց բոլորին՝ թելադրելով հավատարիմ մնալ այն հավատքին և ոգուն, որ նրանք ստացել էին իրենց աշակերտական գրասեղանների առաջ Բուխարեստի հայկական դպրոցի համեստ հարկի տակ և այդ հավատքին և ոգուն նրանք հավատարիմ էին մնացել նաև հայրենի հողի վրա՝ իրենց գիտական և դասախոսական աշխատանքներում:

*
* *

Դեկտեմբերի 24-ին, կիրակի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ:

*
* *

Դեկտեմբերի 26-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Արգենտինայի հայոց տիրախնամ թեմի Կենտրոնական վարչության ներկայացուցիչներ տիար Հարություն Գազազյանը և տիար Գալուստ Տեր-Մարտիրոսյանը՝ Հայոց Հայրապետի հետ տեսակցելու համար թեմի մի շարք եկեղեցական հարցերով:

Մայր տաճարում իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո հարգելի հյուրերը ներկայացան Վեհափառ Հայրապետին և Վեհարանում ջերմ զրույց ունեցան Նորին Սրբության հետ:

*
* *

Դեկտեմբերի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում խոսք առավ Գերմանիայից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Հակոբ աբդ. Գրլընճյանը՝ ներկայացնելով Գերմանիայի նորակազմ հայոց գաղութի կյանքը և մշակութային-եկեղեցական գործունեությունը:

Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տէ՛ր, կեցո՛ դու զհայս» երգի բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 1-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ Գալստյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Իշման ս. սեղանի առաջ Նոր տարվա խորհրդին նվիրված քարոզ է խոսում պատարագիչ հայր սուրբը՝ բնաբան ունենալով Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա» տաղի բառերը, ապա ջերմ ու սրտաբուխ մաղթանքներով շնորհավորում է Հայոց Հայրապետի Նոր տարին և հաջողություններ ցանկանում Մայր Աթոռի միաբանությանը և հավատացյալ ժողովրդին:

Այնուհետև կատարվում է Հայրապետական մաղթանք: Հավարտ եկեղեցական արարողության Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր հոգևոր ճեմարանի սաները աջահամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետի Նոր տարին:

Հանուն միաբանության Հայոց Հայրապետի Ամանորը շնորհավորում է տ. Սիոն արքեպ. Մանուկյանը՝ շեշտելով, որ Մայր Աթոռի միաբանությունը նոր եռանդով ու կորովով այս տարի էլ աշխատելու է Նորին Սուրբ Օծության օրհնության և ղեկավարության ներքո:

Վեհափառ Հայրապետը նույնպես շնորհավորում է Մայր Աթոռի միաբանության Նոր տարին և, Իր հայրական օրհնությունն ու պատգամը տալուց հետո, 1979 թվականի մեկական օրացույց է բաշխում բոլոր ներկաներին:

*
* *

Հունվարի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Եղիշե քհն. Բաղրամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ հնար ինչ իցէ ձեզ ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք» (Հռոմ. ԺԲ 18):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին մեկնեց Արգենտինայի հայոց թեմի Կենտրոնական վարչության ներկայացուցիչ տիար Գալուստ Տեր-Մարտիրոսյանը, որը շուրջ երկու շաբաթ ուխտավորաբար գըտնըվում էր մայր հայրենիքում՝ տեսակցություն ունենալով Վեհափառ Հայրապետի հետ Արգենտինայի հայոց թեմի եկեղեցական մի շարք հարցերի առիթով:

Երևանի օդանավակայանում հարգելի հյուրին, հանուն Վեհափառ Հայրապետի, ճանապարհեց տ. Մյուռոն աբդ. Գրվըգյանը, իսկ պր. Հարություն Գազազյանը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, մեկ շաբաթ առաջ մեկնել էր ս. Էջմիածնից:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում քննության առնվեցին Մայր տաճարում խոսված վերջին երեք քարոզները:

Քննարկման ավարտին Վեհափառ Հայրապետը, Իր գնահատությանն արժանացնելով խոսված քարոզները, նաև կատարեց մի շարք շինիչ և օգտակար թելադրություններ՝ քարոզների բովանդակության, խոսելու հմտության և արվեստի շուրջ:

*
* *

Հունվարի 11-ին, հինգշաբթի.—Ամանորի և ս. Ծննդյան արձակուրդներից հետո, այսօր, հոգևոր ճեմարանում վերսկսվեցին դասավանդությունները:

*
* *

Հունվարի 14-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Տէր, ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս քո խաղաղութեան...» (մաղթանք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռ այցելեց Ֆրանսիայի կապի մինիստր Նորբեր Սեգերը՝ իր տիկնոջ հետ:

Հարգելի հյուրին ուղեկցում էին ՍՍՀՄ կապի մինիստրի տեղակալ Վ. Ն. Լեբեդևը, ՍՍՀՄ կապի մինիստրության արտաքին հարաբերությունների վարչության պետ Ե. Ա. Մոտինը և ՀՍՍՀ կապի մինիստր Թ. Ս. Մինասյանցը:

Հարգարժան հյուրերը, Մայր տաճարում ս. պատարագին ներկա գտնվելուց հետո, Վեհարանում ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից:

Հայոց Հայրապետի և հարգելի հյուրերի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում:

*
* *

Նույն օրը Մայր Աթոռ այցելեցին Լենինգրադի աստվածաբանական ակադեմիայի մի խումբ արտասահմանյան ուսանողներ:

Ուսանողների խումբը, Մայր տաճարում ս. պատարագին ներկա գտնվելուց հետո, Վեհարանում ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից:

Երկու օր հյուրընկալվելով Մայր Աթոռում, ուսանող հյուրերը այդ ընթացքում այցելեցին Հայաստանի պատմական վայրեր՝ ս.

Գեղարդ վանք, Գառնի, Սևան, Օշական, Սարդարապատի հուշարձանախումբ և այլ վայրեր:

*
* *

Հունվարի 17-ին, չորեքշաբթի.—Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Զագորսկի աստվածաբանական ակադեմիայում իր աստվածաբանական ուսումը շարունակելու մեկնեց տ. Գարեգին աբղ. Ներսիսյանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում խոսք առավ Լոնդոնից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնըվող Վրեժ սրկ. Ներսիսյանը: Բարեշնորհ սարկավագը խոսեց՝ Ավետարանում Հիսուս Քրիստոսին վերաբերող անվանումների մասին:

Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 18-ին, հինգշաբթի.—Այսօր ԳՖՀ՝ իր ուսումը շարունակելու մեկնեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Հակոբ աբղ. Գըլընճյանը:

*
* *

Հունվարի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև Որդի իւր Միածին ետ, զի ամենայն որ հաւատայ ի նա, մի կորիցէ...» (Հովհ. Գ 16) բնաբանով:



ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻՆ ԱՍՈՐԻ
(306?—379)

ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանրական եկեղեցու սրբակրոն և վաստակաշատ «Երկոտասան վարդապետաց» շարքում[1], Աթենքի, Ալեքսանդրիայի, Կ. Պոլսի, Անտիոքի, Կապադովկյան Կեսարիայի, Հռոմի, Երուսաղեմի, Կիպրոսի հայրապետների մեջ իր առաքինազարդ վարքագրությամբ, մատենագրական հարուստ և բազմաժանր վաստակով արժանի տեղ ունի նաև ասորական եկեղեցու և գրականության «պարծանք ու ամենամեծ գիտնական ներկայացուցիչն»[2] ս. Եփրեմ Խուրին Ասորին, «սարկաւագ Եդեսիոյ և վարդապետ եկեղեցւոյ»[3]:

Ընդհանրական եկեղեցին մինչև Քաղկեդոնի ժողովը (451 թ.) ունեցել է բազում անվանի և գիտուն հայրապետներ, սակայն, «եկեղեցվո բազմաթիվ վարդապետներու մեջեն միայն **տասուերկուքին** ընտրությունը, պարզապես հետևություն մըն է **տասուերկու** մարգարեներու և **տասուերկու** առաքյալներու թվին» «ըստ նմանութեան երկոտասան աստեղատանց, որք կենդանատեսակք վերածայնին»[4]:

Եկեղեցու «Երկոտասան վարդապետաց» շարքում 6-րդը սուրբ Եփրեմն է:

Ըստ ավանդության, սուրբ Եփրեմը 370 թվականին գնացել է Կապադովկյան Կեսարիա քաղաք և «սարկավագ է ձեռնադրվել սուրբ Բարսեղ Կեսարացուց... Համենայն դեպս, սուրբ Եփրեմը սարկավագությունից բարձր եկեղեցական աստիճան չի ստացել, ուստի թյուրիմացություն պիտի համարվի» մեր մի շարք ձեռագրերում «նորան ընծայված «եպիսկոպոս» կոչումը, իսկ «Խորին Ասորի» կոչման համար միակ ընդունելի բացատրությունը Նորայր Բյուզանդացու տվածն է[5], որով և որոշված է լինում նորա հայրենիքը՝ Խորին Ասորիք կամ Coelésyrie»[6]:

Ըստ վարքագրական տվյալների, սուրբ Եփրեմը ծնվել է «Միջագետաց» Եդեսիա քաղաքում, Դ դարի սկզբին:

Եփրեմը «էր որդի ծնողաց ասորւոց: Հայրը նորա ի Մծբնայ, և մայրն յԱմադայ (Ամիդ), այլ ինքն յԵդեսիա ծնեալ և ի Մծբին սնեալ: Ծնունդն եղև նախ քան զսկիզբն և կամ ի սկզբան թագաւորութեան

---

[1] Օրացոյց, 1978, ս. Էջմիածին, էջ 133, և նաև «Կնիք հաւատոյ», հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի (Տէր-Մկրտչեան), ս. Էջմիածին, 1914, էջ XXXII—LVII:

[2] Կնիք հաւատոյ, նույնը:

[3] Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 443:

[4] «Լոյս» շարաթաթերթ, Կ. Պոլիս, 1905, էջ 1022—1023:

[5] Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900, էջ 403:

[6] Կնիք հաւատոյ, նույնը, էջ XL:

Մեծին Կոստանդիանոսի (306—337) և յերկարեաց ի կեանս մինչև ի սկիզբն տէրութեան Մեծին Թէոդոսի» (379)[7]: Սույն լիակատար վարքը բաղկանում է 12 հատորներից, որոնք լույս են տեսել 1810—1815 թվականներին[8]:

Եփրեմի ծնողները «կռապաշտ էին: Պարտ է իմանալ թէ՝ զկնի եղեն քրիստոնեայ»: Եփրեմի հայրը եղել է նույնիսկ հեթանոսական մեհյանի քուրմ:

Եփրեմը, սակայն, «ի մանկութենէ սնաւ ի հաւատս քրիստոնէութեան» և «պատանեկութեան» հասակում «մկրտեցաւ» հավանաբար Մծբինում, սուրբ Հակոբ Մծբնա հայրապետի ձեռքով[9]: Քրիստոնեությունը Եդեսիա է թափանցել Անտիոքից:

Եփրեմը իր ծննդով իսկ հավատացած է եղել, որ ինքը նախասահմանվել է իր ողջ կյանքը նվիրելու ճշմարիտ Աստուծո ծառայության և պաշտոնին:

Եփրեմը քրիստոնեական բազմակողմանի կրթություն է ստացել Եդեսիայի «Պարսից» նշանավոր դպրոցում, դպրոց, որը քրիստոնեական մշակույթի հռչակավոր կենտրոնն էր Միջագետքում, և ապա իր ուսումը կատարելագործել է Մծբնի նույնքան համբավավոր դպրոցում, աշակերտելով ս. Հակոբ Մծբնացի հայրապետին և «Լույս փայլեցավ ճգնությամբ և վարդապետությամբ, իբրև հոգելից մեկնիչ Հին և Նոր կտակարանների, ճառերու, ներբողների և աղոթքներու հեղինակ» («Լոյս», նույնը, էջ 1022—1023):

Ս. Եփրեմի կյանքի որոշ դրվագներ կապված են եղել ասորական եկեղեցու այդ մեծ սրբի և հայրապետի հետ: Ըստ ավանդության, Եփրեմը ուղեկցել է Հակոբ Մծբնացի հայրապետին մինչև Նիկիա քաղաք և 325 թվականին նրա հետ մասնակցել է տիեզերական առաջին ժողովին: Ոմանք այս հանգամանքը պատմական չեն գտնում:

Սուրբ Եփրեմը ավելի քան տասը տարիներ ապրել և ստեղծագործել է Եդեսիայում: Այստեղ է նա գրել իր առաջին մեկնողական ս. գրական աշխատանքներն ու բանաստեղծությունները: Այստեղ նա ղեկավարել է «Պարսից» դպրոցում քրիստոնեական ուսմանց ամբիոնը, դասախոսություններ է կարդացել Աստվածաշնչի ներածության և մեկնության վրա և հասցրել բազում աշակերտներ, որոնք հետագայում հանդիսացել են ասորական եկեղեցու մեծ մատենագիրներ, մեկնիչներ և գործիչներ:

Եդեսիայի դպրոցում մեծ կարևորությամբ դասավանդում էին նաև փիլիսոփայություն, հռետորություն, արտաքին գիտություններ, ասորերեն և հունարեն լեզուներ:

Եդեսիայում ասորերենի էին թարգմանվում հույն նշանավոր հայրերի դավանաբանական, մեկնողական, քարոզչական գրվածքները: Ասորերեն թարգմանությամբ նաև հասել են հունական գրականության ընտիր էջեր, որոնց բնագրերը նույնպես կորել են:

Ս. Եփրեմը Եդեսիայում «արդյունավոր հանդիսացած է քրիստոնեական ուսուցման և քարոզչության դաշտին մեջ»[10]:

Պարսից Սասանյան Սաբոր Բ թագավորի (311—380) հալածանքների տարիներին, 360-ական թվականներին, ս. Եփրեմը, իր բազում քրիստոնյա հայրենակիցների և իր աշակերտների հետ հեռանում է Եդեսիայից և ապաստանում Մծբին, որտեղ նրան սիրով ընդունում է ս. Հակոբ Մծբնացին և նշանակում տեղի քրիստոնեական դպրոցի վարիչ-տեսուչ[11]:

363-ին, սակայն, Մծբինը գրավվում է պարսիկների կողմից, և Եփրեմը կրկին վերադառնում է Եդեսիա:

Ըստ վարքագրական տվյալների, Մծբնի բնակչությունը ազատվում է կոտորածներից ս. Եփրեմի հրաշքների միջոցով:

Թե՛ Եդեսիայի և թե՛ Մծբնի պարսկական պաշարումների ժամանակ սուրբ Եփրեմը խնամում է երկու քաղաքների և՛ քրիստոնյա, և՛ ոչ քրիստոնյա աղետյալներին, սիրով ու քրիստոնեական մարդասիրական ոգով:

363-ին Եդեսիա վերադառնալուց քիչ հետո, ս. Եփրեմը ճանապարհորդություն է կատարում դեպի Եգիպտոս, որտեղ և ապրում է շուրջ ութ տարի, այցելում է Թեբայիդի նշանավոր վանական մենաստանները և ապա 370—371 թվականներին վերադառնում է և այցելում Կապադովկյան Կեսարիա սուրբ Բարսեղին (329—379), և ինչպես նշվեց, ըստ ավանդության, սարկավագ է ձեռնադրվում նրանից: «Այս ավանդության հետ կապված ընդարձակ պատմություններ կան մեր ձեռագրերում, որոնք հոգևոր հաղորդակցության մեջ են դնում

---

[7] **Հայր Մկրտիչ Աւգերեան**, Լիակատար վարք և վկայաբանութիւն, որք կան ի Հին տօնացոյցի եկեղեցւոյ Հայաստանեայց, հատոր Ժ, Վենետիկ, 1914, էջ 395—425:

[8] Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 54:

[9] **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, Սուրբք և տօնք, Երուսաղեմ, 1954, Բ տպագրություն, էջ 81;

[10] Նույնը, էջ 81:

[11] Կնիք հաւատոյ, նույնը, էջ LX:

եկեղեցու երկու ժամանակակից մեծ հայրերին»[12]:

Ս. Եփրեմը մկրտվելուց և քրիստոնեական լուրջ դաստիարակություն ստանալուց հետո, մի որոշ ժամանակ, Եդեսիայի մոտակա լեռներում, վարել է վանական-ճգնավորական խստամբեր կյանք և «հրաշագործություններով համբավվելե վերջ Կեսարիա է գացած և ս. Բարսեղեն սարկավագ և ըստ ոմանց քահանա ձեռնադրված է»[13]:

Ասորիքում էլ Ա—Գ դարերում եղել են կազմակերպված վանական-անապատական խումբեր, որոնք ապրել են սրբակրոն կյանքով:

Ասորական և կամ «Միջագետաց» եկեղեցու հռչակավոր վանականներ են եղել սուրբ Հակոբ Մծբնացին, ս. Եփրեմը, Մարուգե ճգնավորը, Ադդե և Մարութա եպիսկոպոսները, Պարսամ, Սարգիս, Բագոս, Գուրիաս, Սամունաս, Աբիբա սարկավագը և այլ ճգնավորներ, որոնց հիշատակը ամեն տարի կատարում է մեր եկեղեցին[14]:

Սուրբ Եփրեմը մահացել է 379 թվականին, ըստ այլոց՝ 373 թվականի հունիսին:

Սուրբ Եփրեմի վարքագրությունը գրվել է նրա մահից անմիջապես հետո: Այս մասին վկայություններ կան ս. Գրիգոր Նյուսացու (334—394) և ս. Հովհան Ոսկեբերանի (354—407) վարքագիր Հելենոպոլսի Պալլադիոս եպիսկոպոսի մոտ[15]:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ կատարում է հիշատակը սուրբ Եփրեմի: Առաջին անգամ «Երկոտասան վարդապետաց» տոնին և ապա դեկտեմբերին, ս. Ծննդյան պահքին[16]:

Ս. Եփրեմը արտաքնապես, իր ֆիզիկականով հաճելի տեսք չի ունեցել, վանական կյանք մտնելու օրվանից:

Մինչև իր կյանքի վերջը նա սնվել է միայն գարի հացով, չոր ու թարմ բանջարեղենով: Խմել է միայն բնական ջուր: Նրա մարմինը ոսկորների վրա չորացած մի կմախք է եղել: Հագել է բազում կարկատաններով աղքատիկ վանականի զգեստ և եղել է խարազնազգեստ, քայլել է բոկոտն: Հասակով եղել է փոքրամարմին: Հատացքը՝ խիստ ու խոժոռ: Երբեք չի ծիծաղել կյանքում: Ծաղատ է եղել և ցանցառամորուս, «վախճանեցաւ սուրբ աբբայն Եփրեմ ի խոր ծերութեան իբր եօթանասուն և հինգ և կամ ութսուն ամաց, փոքր ինչ զկնի փոխմանն սրբոյն Բարսղի, յամի Տեառն 379 կամ 380, թողեալ կտակ գրաւոր, զի մի՛ ոք իշխեսցէ զնա պատուով թաղել ի փառաւոր շիրմի կամ այլ կտաւով պատել, այլ թաղեսցեն զիս, ասէ, իմովն կրօնաւորական ձևով, որպէս աղքատ ոք, ի կարգի օտարաց»[17]:

Սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետը, ըստ վարքագրական վկայության, այսպես է բնութագրում «Տիեզերաց վարդապետ», ս. Եփրեմի կյանքն ու գործունեությունը. «Եփրեմ սուրբ հայրն և վարդապետն տիեզերաց, այսպիսի պանծալի գովութեամբ նշանակի ի սրբոյ Ոսկեբերանէն:

Մեծն այն Եփրեմ Ասորին, զարթուցիչ թմբրեցելոց, մխիթար տառապելոց, երիտասարդաց խրատ և հրահանգ, հայելի միայնակեցաց, առաջնորդ ապաշխարողաց, տէգ և նիզակ յաչս հերետիկոսաց, ապաշնչական առաքինութեանց բնակարան և օթևան Հոգւոյն սրբոյ»[18]:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Սուրբ Եփրեմը ևս, որպես ընդհանրական եկեղեցու վարդապետ, թողել է բազմաժանր և հարուստ մատենագրական վաստակ. «Բազմապատիկ մատենիւք եթող զյիշատակ իւր յեկեղեցւոջն այրն Աստուծոյ, **որոյ նման ոչ ոք եղև այլ յաստուրիս** և սակաւք ի վարդապետաց այլոց եկեղեցեաց հաւասարեցան նմա, մինչև իրաւամբք դասիլ սրբոյն Եփրեմի ընդ Երկոտասան վարդապետս կաթողիկէ եկեղեցւոյ»[19]:

Հայ և ասորի ժողովուրդները իրենց դարավոր պատմության ընթացքում աշխարհագրականորեն անմիջական հարևաններ են եղել և միմյանց հետ ունեցել են քաղաքական, տնտեսական և ապա եկեղեցական, մշակութային սերտ կապեր:

Շատ վաղուց ասորական Եդեսիա և Մծբին քաղաքներում գոյություն են ունեցել կազմակերպված հայ համայնքներ, ինչպես նաև ասորական համայնքներ՝ Հայաստանի մանավանդ հարավային գավառներում: Հայ-ասորական կապերը և հարաբերությունները է՛լ ավելի են խորացել և ընդլայնվել երկու ժողովուրդների միջև Ա և Բ դարերում, առաքելական քարոզության և քրիստոնեական եկեղեցիների հաստատման ընթացքում:

Ասորիները, որպես Արևելքի հնագույն ժողովուրդներից մեկը, թեև ունեցել են իրենց սեփական, «ասորերեն գրերը, բայց

---

[12] Նույնը:

[13] **Թորգոմ արքեպ. Գուշակյան**, նույնը, էջ 31:

[14] Օրացոյց, նույնը, էջ 140, 150—151, 155:

[15] **Rubens Duval**, La litérature Syriaque. *էջ 329*,

[16] Օրացոյց, նույնը, էջ 133, 155:

[17] **Հ. Մ. Աւգերեան**, նույնը, էջ 394:

[18] Նույնը, էջ 394:

[19] Նույնը, էջ 413:

առաջին ասորերեն գրքերը գրվել են Բարդածանի կողմից, և հենց նա էլ համարվում է ասորական գրականության հիմնադիրը»[20]:

Եկեղեցական գրականության բնագավառում «ասորական եկեղեցու այս նախնական շրջանի ամենահայտնի անձնավորություններն են Տատիանոս Ասորեստանցին և Բարդիզանեսը (154—223):

Առաջինը ասորոց եկեղեցուն տվեց մայրենի լեզվով Ավետարան (Չորս Ավետարաններից քաղվածորեն մի Ավետարան կազմելով, այդ պատճառով էլ «Աւետարան ըստ չորից» կոչված Diatessaron), որ երկար ժամանակ գործ էր ածվում և ամուր պահպանվում Եդեսիայում, թեև բոլորովին ուղղափառ չէր այն: Իսկ երկրորդը՝ Բարդիզանեսը, յուր եռանդուն քարոզչական գործունեությամբ ու կրոնական երգերով նպաստեց քրիստոնեության զարգացմանն ու ամրանալուն, թեև նա էլ աղանդավոր էր և հետևող Վալենտինի դպրոցին»[21]:

Ասորական գրականությունը, ըստ մասնագետների վկայության, կազմավորվել և զարգացել է Բ և Գ դարերում, քրիստոնեական «գաղափարախոսության ազդեցությամբ և այդ է պատճառը», որ քրիստոնեական եկեղեցու մշակույթի և մատենագրության պատմության մեջ թեև «ասորական կրոնական այս գրքերը չունեն հունական քրիստոնեական գրականության ու նրա խոշոր ներկայացուցիչների՝ Հովհան Ոսկեբերանի, Գրիգոր Նազիանզացու և այլ եկեղեցական հայրերի մտքի մեծածավալ թռիչքն ու փիլիսոփայական, աստվածաբանական նուրբ դատողություններն ու տեսությունները», այնուամենայնիվ «տոգորված են բանաստեղծական խոր ներշնչմամբ և օժտված՝ գեղարվեստական բարձր արժանիքներով» (**Հ. Մելքոնյան**, նույնը):

Ասորական գրականության հիմնական ժանրը բանաստեղծությունն է, տաղերգությունը կամ հագներգությունը, որը մշակվել է հոգևորականների կողմից, ժողովրդի կրոնական ու հոգևոր դաստիարակության և ասորական ժամապաշտության հանդիսավորություն տալու համար[22]:

Կրոնաշունչ այդ բանաստեղծությունների մեջ դրսևորվել են արևելյան ժողովուրդներին հատուկ վառ երևակայությունն ու անմիջականությունը, ինչպիսիք են ս. Եփրեմի բանաստեղծությունները[23]:

Ըստ մասնագետների վկայության, ոչ մի հիմք չկա՝ ասորական, կրոնական այդ բանաստեղծությունները կապելու հեթանոսական, ժողովրդական երգերի հետ և ոչ էլ փնտրելու նրանց մեջ քնարական բարձր թռիչքները, և հունական հեթանոսական դյուցազներգության կախարդիչ ու միամիտ հրապույրը...[24]:

Ասորական կրոնական այդ բանաստեղծությունները որոշ չափով կրել են, սակայն, Հին Կտակարանի բանաստեղծական ստեղծագործությունների, այդ թվում՝ սաղմոսների, մարգարեական օրհներգությունների և «Ողբ»-երի (Երեմիա մարգարեի «Ողբ»-ը) ազդեցությունը:

Ասորական այդ բանաստեղծությունները իրենց էությամբ, ոգով և արտահայտչականությամբ ազգային են, «ինքնուրույն» և ավելի շատ իրենց վրա կրում են ասորական ժողովրդական բանահյուսության ազդեցությունը:

Որոշ գիտնականներ ասորական այդ բանաստեղծության մեջ փորձում են գտնել որոշ առնչություններ նաև բյուզանդական հոգևոր երգերի հետ[25]:

Ասորական գրականության ստեղծման առաջին պատիվը պատկանում է Եդեսիացի Բարդածանին, ինչպես նշվեց:

Բարդածանը ասորական գրականության մեծագույն ներկայացուցիչն է, նահապետը ասորական գրականության:

Բարդածանը ծնվել է 154 թվականի հուլիսի 11-ին Եդեսիայում, ազնվական և հեթանոս ընտանիքում[26]:

Բարդածանի ծնողները պարթևական հալածանքներից փախչելով, ապաստան են գտել Եդեսիայում: Ասորիքում՝ Դայծան գետն անցնելիս, Բարդածանը ծնվել է և «այդ պատճառով նրա անունը դրել են Բար-Դայծան», ինչպես վկայում է Միքայել Ասորի պատմիչը[27], այսինքն Դայծան գետի որդի:

Ըստ ազգային պատկանելության, ժամանակակից եկեղեցական հայր Հիպպոլիտը (մեռած 235 թ.) նրան «հայ է անվանում... թե նրա հայրը կամ մայրը Եդեսիայի հայ գաղութից կարող էր լինել... եթե Բարդիզանեսը հիրավի հայկական ծագում է ու-

---

[20] **Հայկ Մելքոնյան**, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1970, էջ 6:

[21] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորվոց եկեղեցիների հետ, ս. Էջմիածին, 1908, էջ 4:

[22] **R. Duval**, նույնը, էջ 6—11:

[23] **Հայկ Մելքոնյան**, նույնը, էջ 6:

[24] **R. Duval**, նույնը, էջ 10—11:

[25] Նույնը:

[26] **Johannes Quasten**, Patrology, vol. I, 1966, էջ 263:

[27] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 8:

նեցել, այդ միայն պատիվ է բերում հայոց ազգին»[28]:

Բարդածանը հունական, հեթանոսական կրթություն է ստացել Հիերոպոլիս քաղաքում, կռապաշտ մի քուրմի մոտ և 25 տարեկան հասակում միայն քրիստոնյա է դարձել և մկրտվել[29]:

Բարդածանը մանկական ընկերն ու մտերիմ բարեկամն է եղել Օսրոյենի Աբգար Թ քրիստոնյա առաջին թագավորի (179—216):

Եվսեբիոս Կեսարացին Բարդածանին համարում է «այր երևելի և հզօր բանիւք ի բարբառ ասորի»[30]:

Բարդածանի և նրա գրականության մասին «հիացական խոսքերով արտահայտվել են նաև Եպիփան Կիպրացին (+403) և Եփրեմ Ասորին (+379)»: Ըստ Եփրեմի վկայության, Բարդածանը «աշխարհիկ մարդ էր, սիրում էր կյանքն ու ճոխությունը և հակադրվում՝ Մարկիոնի ճգնավորական կենցաղին»[31]:

Բարդածանը նախապես եղել է հետևորդ Վալենտինյան աղանդի և դրա նշանավոր ներկայացուցիչը[32]: Ապա դատապարտել է այն, բայց, ըստ Եվսեբիոսի վկայության, կատարելապես ինքն իրեն չի մաքրել այդ աղանդի կեղտերից, չի հրաժարվել իր հին հերետիկոսությունից:

Բարդածանը գրել է դիալոգներ «Ընդդէմ Մարկիոնի և այլոց ոմանց աղանդաւորաց» և ստեղծել իր աղանդը, «այլ հերձուած յարդարեաց յինքեանէ», ինչպես վկայում է Խորենացին:

Բարդածանը կորովի և կրքոտ հակաճառող է եղել: Իր հակաճառությունները անձամբ ինքը ասորերենից թարգմանել է հունարենի:

Բարդածանի հակաճառական գործերի մեջ նշանավոր է նրա «Յաղագս ճակատագրի» և կամ «Գիրք երկրների օրենքների մասին» երկխոսությունը[33], որը մեզ հասել է ասորերեն թարգմանությամբ: Արդի քննադատությունը այդ գրքի հեղինակ է համարում Բարդածանի աշակերտ Փիլիպպոսին, թեև երկխոսության մեջ կենտրոնական դեմքը Բարդածանն է, որը լուսաբանում է իր հետևորդներին հուզող հարցերը և շեշտում մարդկային ճակատագրի և նկարագիրների վրա աստղերի դիրքի ունեցած ազդեցությունը[34]:

Ըստ ս. Եփրեմի, Բարդածանը համարվում է ասորական տաղերգության հիմնադիրը: Նա իր գրած 150 հոգևոր գրքերի շնորհիվ «դարձավ ասորական եկեղեցական երգեցողության հայր» (**Երվանդ վարդ. Տեր-Մինասյանց**, Ընդհանուր եկեղեցական պատմություն, ս. Էջմիածին, 1908, էջ 82): Բարդածանը այդ 150 հոգևոր երգերն ու տաղերը գրել է «ժողովրդի սրտում կրոնական իր ուսմունքը տարածելու համար»[35]: Ս. Եփրեմը Բարդածանի աղանդավորական ուսմունքի ազդեցությունը ասորի հավատացյալների վրա մեղմելու համար նրա դեմ գրում է ավելի քան 300 հոգևոր երգեր և տաղեր:

Երբ 216 թվականին Հռոմի Կարակալլա կայսրը (211—217) գրավում է Եդեսիան, վերացնում տեղի քրիստոնյա թագավորությունը և Եդեսիան վերածում հռոմեական արևելյան մի նահանգի, Բարդածանը քաղաքի անկումից հետո փախչում է Հայաստան, աղանդավորական իր ուսմունքը տարածելու համար այնտեղ, «աշակերտել զոր կարացէ ի խուժ, հեթանոսաց»[36]:

Բարդածանի Հայաստան գալու մասին վկայում են նաև ասորական աղբյուրները[37]:

«Մեծ ուշադրության արժանի է ամենից առաջ այն երևույթը, որ Եդեսիայի եկեղեցու երկու ամենանշանավոր անձնավորություններից մեկը՝ Բարդազանեսը, կապված է հայոց եկեղեցու և հայ ազգի անվան հետ»[38]:

Հայաստանում Բարդածանը իր քարոզչական գործունեության ընթացքում անհաջողության է մատնվում և ստիպված նվիրվում է գրական-պատմական ուսումնասիրությունների. «Եմուտ նա յամուրն յԱնի և ընթերցեալ զմեհենական պատմութիւնն (Ողյումպ քրմապետի) յորում և զգործս թագաւորացն, յաւելլով իւր և որ ինչ առ իւրեաւն, և փոխեաց զամենայն ի լեզու ասորի որ և ապա անտի յեղան ի յոյն բան»[39]:

Բարդածանը 217 թվականին Հայաստանից վերադառնում է Եդեսիա, ուր և վախ-

---

[28] Նույնը, էջ 7—8: Տես նաև **Հայկ Մելքոնյան**, նույնը, էջ 151:

[29] **Johannes Quasten**, նույնը, էջ 263:

[30] **Եւսեբիոս Կեսարացի**, Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, դպրութ. Դ, գլուխ Լ, էջ 312: Նաև **Johannes Quasten**, նույնը, էջ 263:

[31] **Johannes Quasten**, նույնը, **Հայկ Մելքոնյան**, նույնը, էջ 150:

[32] **Johannes Quasten**, նույնը, էջ 263:

[33] Նույնը:

[34] Նույնը:

[35] **R. Duval**, նույնը, էջ 11:

[36] **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, գիրք Բ, գլուխ ԿԶ, Տփղիս, 1913, էջ 201:

[37] **Հայկ Մելքոնյան**, նույնը, էջ 154:

[38] **Երվանդ Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 7:

[39] **Խորենացի**, նույնը, էջ 201: Տես նաև **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 8: **Հայկ Մելքոնյան**, նույնը, էջ 150:

ճանվում է 223 թվականին, 68 տարեկան հասակում, թողնելով մի մեծ դպրոց, որը հետագայում հերձվածողական դարձավ:

Սույն Բարդածանի աշակերտն է համարվում ս. Եփրեմը: Թեև ասորական գրականության հիմնադիրը, ինչպես նշվեց վերևում, հանդիսանում է Բարդածանը, բայց նրա մատենագրական վաստակի մեծ մասը մեզ չի հասել:

Ասորական եկեղեցին չէր մտահոգվում Բարդածանի մատենագրական վաստակի պահպանմամբ, որովհետև այն աղանդավորական էին համարում: Հատկապես Բարդածանի «Սաղմոսաց» մեկնությունն ու նրա գրած հոգևոր երգերն ու տաղերը չեն պահպանվել: Դրանք ոչնչացվել են իրենց աղանդավորական բովանդակության պատճառով: Վալենտինյան, Գնոստիկյան և Մարկիոնյան աղանդավորների ուսմունքի մասին տես՝ **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց,** Ընդհանուր եկեղեցու պատմություն, ս. Էջմիածին, 1908, էջ 73—83: **Johannes Quasten,** նույնը, էջ 254—275, **Հայկ Մելքոնյան,** նույնը, էջ 151:

Այդ իսկ պատճառով ս. Եփրեմը հանդիսանում է հիմնականում ասորական գրականության մեծ ներկայացուցիչը, «Նահապետն ու նախաշավիղը», որի գործերից շատերը հասել են մեզ ասորերեն, ապա հունարեն, հայերեն, եթովպերեն, լատիներեն և այլ լեզուների թարգմանությամբ:

Ասորական գրականությունը բաժանվում է երկու հիմնական մասերի.

ա. **Չափածո, բանաստեղծական քարոզներ և ճառեր** (homélies):

բ. **Հոգևոր երգեր** (hymnes)[40]:

Չափածո քարոզները բանաստեղծական շնչով գրված կրոնական ճառեր են, պատմողական, մեկնողական և էպիկական բնույթի:

Ս. Եփրեմը ևս գրական այս ժանրը օգտագործում էր իր ճառերի և մեկնողական աշխատությունների մեջ:

Ս. Եփրեմի ճառերը գրվել են եկեղեցական մեծ տոների առիթով, ուսուցողական նպատակներով և նվիրված են սրբերի և նահատակների հիշատակին:

Հնում նման բանաստեղծական ճառեր գրվում էին ի պատիվ աստվածությունների, ազգային հերոսների[41]:

Հոգևոր, կրոնական երգերը ասորական գրականության երկրորդ խումբն են կազմում: Սույն տիպի երգերը ասորական լեզվի մեջ կոչվում էին **ուսուցումներ** կամ **հրահանգներ:**

Բանաստեղծական սույն ժանրի մեծ վարպետ էր Բարդածանը, որին հետևեց նաև ս. Եփրեմը:

Բարդածանը ասորական բանաստեղծությանը տվեց այն հատկանիշը, որը պահպանվեց հետագա դարերի ընթացքում: Բարդածանի հոգևոր երգերն ու չափածո քարոզները մնացին ասորական գրականության մեջ որպես անզուգական նմուշներ, ընդօրինակվեցին հետագա ասորի գրողների կողմից, հունարենի թարգմանվեցին և մեծ հնչակ հանեցին նաև Արևմուտքում:

Թե՛ Բարդածանը և թե՛ ս. Եփրեմը իրենց ճառերն ու հոգևոր երգերը գրել են հերետիկոսների և սկեպտիկների դեմ, որոնք բազմաթիվ և ազդեցիկ հետևորդներ ունեին Միջագետքում և Ասորիքում:

Հոգևոր երգերը ընդհանրապես խրատական-հորդորական (parénétique) բնույթ ունեին, նվիրված եկեղեցական, ժողովրդական հանդիսություններին և սրբերի հիշատակին:

Հոգևոր, կրոնաշունչ սույն երգերը կատարվում էին եկեղեցական արարողությունների ընթացքում, քարոզներից հետո:

Ս. Եփրեմի հոգևոր երգերից մի քանիսը ակրոստիկոսներ-ծայրոտն-են[42], նվիրված Քրիստոսի Ծննդյան, Հարության, Պայծառակերպության և այլ տերունական տոներին, ինչպես նաև ս. Կույսին, սրբերին, նգնավորներին:

Արևելքում է, որ առաջինը եկեղեցական պաշտամունքի մեջ Հին Կտակարանի սաղմոսների և մարգարեական օրհներգությունների հետ միասին հանդես են գալիս հոգևոր նոր երգեր ու բանաստեղծություններ[43]:

Փիլիսոփայական հին դպրոցներից շատերը, ինչպես նաև քրիստոնեական բոլոր աղանդավորները, ժողովրդական երգերի միջոցով, հասարակաց ուրախության վայրերում, սրճարաններում, ճաշարաններում, թատրոններում տարածում և մասսայականացնում էին իրենց մոլար ուսմունքը:

Ընդհանրական եկեղեցու մեծանուն հայրապետները նույնպես օգտագործում էին ուղղափառ և ճշմարիտ հավատքը տարա-

---

[40] R. Duval, նույնը, էջ 13:

[41] Nouveau Larousse universel. I, Paris. 1948, էջ 960.

[42] Ե. Գ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա—Զ, «Չափածո ստեղծագործություն», որի առաջին տողերի առաջին կամ երկրորդ, երրորդ տառերը որևէ անուն, բառ կամ ամբողջ խոսք են կազմում, Երևան, 1976, էջ 18:

[43] Johannes Quasten, նույնը, «Քրիստոնեական բանաստեղծության սրբազնավորությունը, առաջին քրիստոնեական հոգևոր երգերը», էջ 158—178:

ծելու համար ժողովրդի մեջ բանաստեղծություններ ու հոգևոր երգեր: Օրինակ՝ ս. Գրիգոր Նազիազանցին (330—390) գրել է 400 հոգևոր բանաստեղծություններ կամ երգեր, «որոնց մեջ կգտնենք... խորին փիլիսոփայական միտքեր մը լուսավորված աստվածպաշտություն»[44]: Նույնն է պարագան նաև ս. Եփրեմի մոտ: Այս իմաստով «նա հանդիսանում է մեծագույն քրիստոնյա բանաստեղծը իր ժամանակաշրջանի»[45]: Նա իր հոգևոր, բանաստեղծական վաստակով հարստացրել է ասորական եկեղեցական մատենագրությունը: «Այս ուղղությամբ արևելյան քրիստոնեական ժամապաշտությունը մեծ զարգացում է ապրում»[46]:

Նույնն է պարագան նաև հայերի մոտ, մեր գրավոր դպրության արշալույսին: Ըստ Մանուկ Աբեղյանի բնութագրման, «հոգեվոր երգի» սկիզբն ու զարգացումը, ձևն ու բովանդակությունը «մեր գրավոր գրականության սկզբում, հայ մտքի ազգային ստեղծագործությունն ամենից ավելի բանաստեղծության մեջ պիտի երևան գար»... Եկեղեցական բանաստեղծությունն ամենից առաջ օրհներգություն է, որ ընդհանուր եկեղեցու մեջ ծնված և զարգացած է քրիստոնեական աստվածապաշտությանը հանդիսավորություն տալու համար[47]:

Ասորական գրականության կարևոր ու հիմնական մեկ ժանրն է նաև ս. Գրոց մեկնությունը:

Ասորի եկեղեցու հայրերի ս. Գրոց մեկնության նվիրված աշխատությունները մի ամբողջ գրադարան են կազմում, թեև այդ մեկնությունների մի կարևոր մասը մեզ չի հասել[48]:

Ս. Եփրեմը ևս թողել է մեկնողական հարուստ ժառանգություն: Նրա մեկնողական աշխատությունները Հին և Նոր Կտակարանների մի շարք գրքերի վրա համարվում են ասորական գրականության մեկնողական ժանրի հնագույն գործերը[49]:

Ս. Եփրեմը իր մեկնողական աշխատությունները գրել է Եդեսիայում հավանաբար 337—345 թվականներին, երբ դասավանդում էր տեղի «Պարսից» քրիստոնեական դպրոցում, որպես քրիստոնեական ուսմունքի ամբիոնի վարիչ:

Հին կտակարանյան իր մեկնությունների ժամանակ ս. Եփրեմը օգտագործում էր Հին Կտակարանի **Պեշիտտո** ասորերեն թարգմանությունը[50]: Իսկ Նոր Կտակարանի Չորս Ավետարանների մեկնության ժամանակ Տատիանոս Ասորեստանցու նշանավոր **Դիատեսարոնը**, Համաբարբառը:

Ս. Եփրեմից առաջ ասորական գրականության երկրորդ խոշոր ներկայացուցիչը Տատիանոսն է, «Նոր պղատոնական փիլիսոփան»[51]:

Տատիանոսը ծննդով ասորի, զավակն էր հեթանոս մի ընտանիքի: Նա ծնվել է 110 կամ 120 թվականներին և մահացել շուրջ 175-ին: Իր ուսումը ստացել է Հռոմում Հուստինիանոս Վկայի քրիստոնեական դպրոցում[52]: Տատիանոսը Հուստինիանոս Վկայի քարոզությամբ և ազդեցությամբ էլ քրիստոնյա է դարձել, համոզվելով, որ միակ ճշմարիտ փիլիսոփայությունը քրիստոնեական վարդապետությունն է[53]: Քրիստոնյա դառնալուց հետո նա «սկզբունքով ժխտում էր հունական ողջ փիլիսոփայությունը, արվեստը, գիտությունն ու բարոյականը»:

Նա Աստվածաշնչից դուրս չէր ընդունում ոչ մի ճշմարտություն, մշակույթ և լեզու:

Երկար տարիներ Հռոմում, Հունաստանում և այլուր թափառելուց հետո, վերջապես վերադառնում է իր հայրենիքը և հաստատվում Եդեսիայում, ուր գրական գործերով է զբաղվում և հանդիսանում է հիմնադիրը, այսպես կոչված, Ողջախոհների (էնկրատիտ)՝ Գնոստիկյան աղանդավորական մի առանձին խմբակի[54], որը մերժում էր ամուսնությունը, մսակերությունն ու գինին[55]:

Տատիանոսը Հռոմում խզում է իր կապը եկեղեցու հետ և հավանաբար 154 թվականին խմբագրում է իր նշանավոր Դիատեսարոնը, «չորս» Ավետարաններից կազմը-

---

[44] **Թորգոմ պատրիարք Գուշակյան**, նույնը, էջ 109:

[45] **Johannes Quasten**, Patrology, vol. III, 1965, էջ 4:

[46] Նույնը, էջ 5:

[47] **Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 473—507:

[48] **R. Duval**, նույնը, էջ 63:

[49] Նույնը, էջ 63:

[50] **Յ. Ս. Անասեան**, Աստուածաշունչ մատեանի հայկական բնագիրը, առանձնատիպ «Հայկական մատենագիտության» Բ հատորից, Երևան, 1976, էջ 311—358:

[51] Nouveau Larousse, Բ հատոր, էջ 890: Նոր պղատոնական փիլիսոփայության մասին տե՛ս **Շահան Ռ. Պերպերյան**, Պատմություն իմաստասիրության, Անթիլիաս, 1977, էջ 135—139:

[52] Հուստինիանոս Վկայի մասին տես **Johannes Quasten**, vol. I, նույնը, էջ 196—214:

[53] **Johannes Quasten**, նույնը, էջ 220:

[54] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց**, Պատմություն ընդհանուր եկեղեցու, ս. Էջմիածին, էջ 81:

[55] Nouveau Larousse, II, նույնը, էջ 890: **Johannes Quasten**, նույնը, էջ 221:

ված համաբարբառ Ավետարանը, «Ավետարան ըստ չորից» կամ «խառն», միացնելով չորս Ավետարանների բովանդակությունը մեկ Ավետարանի մեջ:

Տատիանոսի Համաբարբառը ասորերեն ամենահին Ավետարանն է, որը մինչև Ե դարի 30-ական թվականները, մինչև Գ Տիեզերական ժողովի գումարումը Եփեսոսում, 431 թվականին, համարվում էր ասորական եկեղեցու գործածած և սիրված Ավետարանը:

430-ից հետո Եդեսիայում նշանավոր Ռաբուլաս եպիսկոպոսը նորից ասորերենի է թարգմանում Նոր Կտակարանը, որը հայտնի է դարձյալ Պեշիտտո անունով:

Տատիանոսի համաբարբառ Ավետարանը իր աղանդավորական որոշ թեքումների համար եկեղեցուց դուրս է մղվում և ոչընչացվում:

Նոր Կտակարանն ունեցել է ասորական երեք թարգմանություններ. առաջինը Տատիանոսի Համաբարբառն է, երկրորդը՝ «առանձին Ավետարաններ», և երրորդը՝ Պեշիտտոն:

Տատիանոսի համաբարբառ Ավետարանը խմբագրվել է 154 թվականին Հռոմում, հունարեն լեզվով, և ապա Եդեսիայում նրա կողմից թարգմանվել է ասորերենի:

1934-ին Սիրիայում կատարված հնագիտական մի պեղումի ժամանակ հայտնաբերվել է Տատիանոսի Համաբարբառի հունարեն բնագրից 14 տող: Համաբարբառի ասորերեն բնագիրը կորել է: «Մեր ձեռքն է հասել ոչ թե ասորերեն բնագիրը, այլ հայերեն թարգմանությունը»[56]:

Ս. Եփրեմը 360—370 թվականներին գրել է Համաբարբառի ասորերեն թարգմանության մեկնությունը, ինչպես նաև Պողոս առաքյալի 14 թղթերի մեկնությունը՝ կատարված դարձյալ ասորերեն թարգմանության հիման վրա, որոնք պահվել են նույնպես հայերեն թարգմանությամբ[57]:

Համաբարբառի տարբեր լեզուներով կատարված թարգմանությունները ապացուցում են նրա խոր ազդեցությունը եկեղեցու կյանքում Ավետարանի գիտական բնագրի կազմության հարցում:

Տատիանոսի երկրորդ կարևոր գործը, որ մեզ հասել է, կոչվում է «Ճառ առ հելլենս» կամ «Բան ընդդէմ հելլենաց», գրված 155-ին: Սա մի ջատագովություն է «ընդդէմ հեթանոսական բազմաստվածության», որի մեջ ցույց է տրված «քրիստոնեության բարոյապես փրկող միաստվածության առավելությունը թե՛ գիտունի և թե՛ հասարակ մարդու համար»[58]:

Ինչպես ասորական, նույնպես էլ հայ գրականության ամենահին և կոթողային գրական հուշարձանը Աստվածաշնչի թարգմանությունն է: Հին Կտակարանի «փոխանակի» (Մովսես Խորենացի) և «զլանկարծագիտ» (Կորյուն) հայերեն առաջին թարգմանությունը կատարվել է 406—420 թվականներին Պեշիտտո ասորերեն թարգմանությունից, «յոչ լինելոյ յունի» (Մովսես Խորենացի):

Հին Կտակարանի ասորերենից թարգմանված առաջին թարգմանությունից պահպանվել են միայն մեր այսօրվա Աստվածաշնչի կանոնի մեջ մտած Ա և Բ Մնացորդաց գրքերը, որոնք «հայերեն լեզվի ամենահին, թե չասենք անդրանիկ, գրվածքներից մեկն է ընդունվելու, որ հասել է մեր ձեռքը», գրում է հմուտ բանասեր Գրիգոր Խալաթյանցը[59]:

431 թվականից հետո, երբ մեր թարգմանիչ վարդապետները Կ. Պոլսից վերադարձան Հայաստան, ավարտելով իրենց ուսումնառության շրջանը, իրենց հետ բերեցին Աստվածաշնչի «ստոյգ», «հաստատուն» և «ճշմարիտ» հունարեն Յոթանասնից թարգմանության մի օրինակը, և ս. Սահակ Պարթև հայրապետը իր թարգմանիչ հունագետ և ասորագետ աշակերտներով կատարեց հին թարգմանության սրբագրությունը կամ նոր թարգմանությունը:

Խորենացին վկայում է, որ ս. Սահակը մինչև իր Տիզբոն աքսորվելը, 428 թվականը, զբաղվում էր «թարգմանութեան պարապեալ յասորւոյն»:

Կորյունը վկայում է, որ Եզնիկն ու Հովսեփը ուղարկվել էին գրերի գյուտից հետո «յասորի բարբառոյն սուրբ Գիրս ի հայ լեզու» թարգմանելու համար:

Մեր պատմական աղբյուրների վկայությամբ, գրերի գյուտից առաջ «Պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանօրայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց». (Ղազար Փարպեցի):

Առաջին հայագիր դպրոցների հաստատումից առաջ էլ Վաղարշապատում ս. Գրիգոր Լուսավորչի բացած դպրոցներում հայ ուսանողությունը բաժանվել էր երկու խմբի, «զոմանս յասորի դպրութեան կարգեալ, և զոմանս հելլենս» (Ագաթանգեղոս):

Մեծն Ներսես, Լուսավորչից հետո, «կար-

[56] Johannes Quasten, նույնը, էջ 225:

[57] R. Duval, նույնը, էջ 40, 64:

[58] Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց, Պատմություն..., նույնը, էջ 103:

[59] Հայկ Մելքոնյան, նույնը, էջ 114:

գէր ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասորերէն յամենայն գաւառս հայոց» (Փավստոս Բյուզանդ):

Ասորերենը, մինչև գրերի գյուտը, թեև Հայաստանի հարավային գավառներում մանավանդ գործածական է եղել, բայց երբեք տիրապետող հանգամանք չի ունեցել, նշում են մասնագետները:

Սույն հոդվածի նպատակից դուրս է խոսել Աստվածաշնչից հայերեն թարգմանությունից հետո ասորական գրականությունից կատարված այլ թարգմանությունների, այդ թվում վարքագրությունների, մեկնությունների, ճառերի, հոգևոր երգերի և տաղերի մասին:

Հայ-ասորական պատմական, տնտեսական, մշակութային, գրական, վարքագրական հարաբերությունների մասին արժեքավոր ուսումնասիրություններ են հրատարակել Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանցը[60], Հայկ Մելքոնյանը[61] և ուրիշներ:

Ասորական եկեղեցու հետ շարունակվել են հարաբերությունները Բաբգեն Ա Ոթմեցի (490—516), Քրիստափոր Ա Տիրառեջցի (539—545), Ներսես Բ Բագրևանդացի (548—557), Մովսես Բ Եղիվարդեցի (574—604), Հովհան Օձնեցի (717—720), Ներսես Շնորհալի (1166—1173) կաթողիկոսներու օրով:

Այս հարաբերությունների մասին կարևոր աղբյուրներ են Գիրք Թղթոց-ում հրատարակված նամակները[62]:

Զ դարից սկսած հայ եկեղեցին Արևելքում համարվում էր ուղղափառ միաբնակության ամրոցն ու ջահը ընդդեմ Նեստորականության և Եվտիքականության, չնայած իր առաջ կանգնած դժվարություններին: Հայ եկեղեցուն դիմում էին մանավանդ ուղղափառ ասորիները պաշտպանվելու համար Նեստորականների և այլ աղանդավորների հալածանքներից, որոնց քաղաքական նկատառումներով, ընդդեմ Բյուզանդական կայսրության, պաշտպանում էր Պարսկաստանը:

Ասորի ուղղափառ եկեղեցին Ե դարի վերջից և Զ դարի սկզբից բաժան-բաժան էր եղել դավանական մի շարք կարևոր հարցերի պատճառով: Ասորական եկեղեցու ծոցում կազմվել էին Նեստորական, Սևերյան և Հուլիանիտյան խմբակներ[63]:

Այս պառակտված կացության մեջ «Ասորիները ցանկություն են հայտնում հայոց եկեղեցու հետ սերտ հարաբերության մեջ մտնել»[64]: Նույնիսկ Նեստորականները փնտրում են հայ եկեղեցու հովանավորությունը, քարոզելով, որ իրենց և հայերի դավանությունը նույնն է. «Հոռոմք և Հայք և Վիրք և Աղուանք զնոյն կանոն և զնոյն հաւատս ունին զոր մեք ունիմք»[65]:

«Թուղթ ասորւոց ուղղափառաց ի հայս» գրության մեջ ասորի ուղղափառ «Երիցունք և սարկաւագունք գաւառիս եկեղեցեաց, և վանից սպասաւորք և ամենայն ժողովրդականք ուղղահաւատք» դիմում են հայոց Ներսես կաթողիկոսին և նրանից օգնություն և պաշտպանություն են խնդրում իրենց նեղ կացության մասին, հայտարարելով. «Որպէս որդիք, որ խնդրեն ի հարանց, նոյնպէս և մեք խնդրեմք զկարոտութիւն մեր ի ձեր հայրութենէն... զի մեք եմք յաշխարհի հերձուածողաց և բնակեալ եմք ի մէջ նոցա, որպէս գառինք ի մէջ գայլոց...»: Վերոհիշյալ գրության մեջ հայ եկեղեցու հայրապետներն ու վարդապետները համարվում են «Հայր և ուսուցիչ... սիւնք հաւատոյ, լոյս աշխարհի, քարոզիչք արդարութեան, աշակերտք առաքելոցն, բժիշկ իմաստուն հիւանդաց» և այլն:

Սույն հայտարարությունների հետ միաժամանակ շեշտվում է, որ հայերի և ուղղափառ ասորիների հավատքը մի է. «Հայր էք դուք մեր արդարութեան և մեք որդիք եմք ձեր հաւատովք, զի հաւատ մեր և ձեր՝ մի է»[66]:

Այնուհետև հայ-ասորական եկեղեցական, մշակութային հարաբերությունները շարունակվում են մինչև ԺԷ դարի կեսերը:

Մեզ է հասել ասորի վարքագիր Հակոբ Սրճեցու (մահացած 521 թվականին) «Վարք սրբոյն Դանիէլի Գալաշացւոյ» աշխատությունը: Վարքի «ասորերեն սկզբնագիրն առայժմ հրատարակված չէ...»: Վարքի հայերեն թարգմանությունը կատարվել է 1651 թվականին Ամիդում, Սարգիս եպիսկոպոսի կողմից:

Դանիելի վարքի հայերեն թարգմանությամբ «Հայ-ասորական գրական հարաբերությունների պատմությունը երկարաձգվում է շուրջ 400 տարով... Մինչև այժմ բանա-

---

[60] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց,** Հայ եկեղեցու հարաբերությունները..., նույնը, էջ 63—288:

[61] **Հայկ Մելքոնյան,** էջ 34—53, 72—84, 101—128, 136—150 և այլն:

[62] Գիրք թղթոց, Ալեք-պոլ, 1901, գլուխ Ժ, էջ 52, գլուխ ԺԱ, էջ 55, գլուխ ԺԲ, էջ 59, գլուխ ԺԳ, էջ 62, գլուխ ԺԴ, էջ 66:

[63] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց,** Հարաբերություններ, նույնը, էջ 84—90:

[64] Նույնը, էջ 91:

[65] Գիրք թղթոց, նույնը, գլուխ Ժ, էջ 52:

[66] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց,** նույնը, էջ 93—97:

սիրությանը հայտնի էր, որ ասորերենից վերջին թարգմանությունները կատարվել են 13-րդ դարում»[67]:

Ս. Եփրեմը ասորական եկեղեցու ամենանշանավոր եկեղեցական հայրն է, որ մեծ հարգանք է վայելել հայ եկեղեցու մեջ[68], որպես բանաստեղծ, աղոթասաց, մեկնիչ և սրբակրոն վանական:

Նրա մատենագրական վաստակը մեծ ընդունելության է արժանացել Ե դարից սկսած մեր եկեղեցական մատենագրության մեջ: Իսկ ինքը՝ ս. Եփրեմը, ս. Հովհան Ոսկեբերանի հետ համարվել է ամենահեղինակավոր մեկնիչը Աստվածաշնչի:

Ս. Եփրեմի մատենագրական վաստակի հայերեն թարգմանություններն ու տպագրությունները կներկայացվեն «Էջմիածին» ամսագրի հաջորդ համարում:

(Շարունակելի)

---

[67] **Լևոն Հ. Տեր-Պետրոսյան**, Յակոբայ Սրճեցւոյ «Վարք սրբոյն Դանիէլի Գալաշացւոյ», մեքենագիր: Սույն ուսումնասիրությունը և «Վարք»-ը տես «Էջմիածին» ամսագրի հաջորդ համարում:

[68] **Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց**, նույնը, էջ 55:



ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
CATEDRALA ARMEANA DIN BUCURESTI

Պրոֆ., դոկտ. Յոն Սավա Նանու
Profesor Dr. ION SAVA NANU

Հաճույքով մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ռումինիայի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, հնագետ և արվեստաբան, դոկտ., պրոֆ. Յոն Սավա Նանուի «Բուխարեստի հայկական եկեղեցին» ուսումնասիրությունը:

Սույն ուսումնասիրությունը, գրված ֆրանսերեն լեզվով, կարդացվել է 1978 թվականի սեպտեմբերի 12—18 օրերին Երևանում տեղի ունեցած հայ արվեստի սիմպոզիումին, որին հրավիրված է եղել նաև հարգելի պրոֆեսորը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բուխարեստում առաջին հայերի ներկայությունը հիշատակվում է 1400-ից 1435 թվականների շուրջ: Մի հարյուրամյակ անց՝ նրանք որոշում են այնտեղ կառուցել մի եկեղեցի, որի հիմքի առաջին քարերը դրվում են 1584 թվականին: Եկեղեցին, որի շինությունն ավարտվում է 1629 թվականին, կոչվում է «Բոլոցիա» («Եղբայրություն»):

Այնուհետև հայերը Կոստանդնուպոլսից բերել են տալիս եկեղեցական զանազան գրքեր, և 1634 թվականին Եղիա անունով մի քահանա հայերեն լեզվով ժամասացություններ է կատարում թե՛ առաքելական և թե՛ կաթոլիկ հայերի համար:

1638 թվականին հայերը կառուցում են մի առանձին փայտաշեն եկեղեցի, որը կոչվում է «Սրբոց Հրեշտակապետաց»: 1685 թվականին, Հովյանց Հաջի Հարություն ամիրայի նախաձեռնությամբ, կառուցվում է մի ուրիշ աղյուսաշեն եկեղեցի, որը կործանվում է հրդեհից: Հետագայում այս եկեղեցին վերակառուցվում է 1781 թվականին և գործում մինչև 1910 թվականը[1]:

Ինչ վերաբերում է Բուխարեստի առաջին հայկական եկեղեցուն, տ. Հարություն քահանա Անդրեասյանը նշում է, որ առաջին եկեղեցին իրոք եղել է «Եղբայրություն» կոչված եկեղեցին, որի մասին հիշատակություններ կան նաև գերմաներեն լեզվով գրված մի շարք փաստաթղթերում[2]:

Հրդեհից կործանված և ապա 1781 թվականին վերակառուցված հայկական եկեղեցու վրա կա մինչև օրս պահպանված մի արձանագրություն, ուր հետևյալ հիշատակությունն ենք կարդում:

«Ողորմութեամբն Աստուծոյ վերստին շինեցաւ սոյն եկեղեցիս սուրբ Հրեշտակապետու հրամանաւ և յաւուրս մեծապատիւ Ալէքսանտրի Պարոնին, և օժանդակութեամբ և ձեռնտուութեամբ ոմանց անձանց որք ի Կոստանդնուպօլիս բնակեալ, նախկին շինմանն պատճառ Հովուեանց հանգուցեալ մահտեսի Յարութիւն ամիրան, որոյ թոռունքն Պօղոս ամիրան, Զօպան ամիրան և Գաբրիէլ ամիրան, և իշխանապետ յարգելի մահտեսի Յարութիւն ամիրան և Բ եղբարք մահտեսի Եղիազարն և մահտեսի

[1] Grigore Goilav, Bisericile armene de prin Țările Române, București, 1912, p. 17—18.

[2] „Aurora", 1906, № 12, p. 2.

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Վարդերեան, յԱնդրիանուպոլիս բնակեալ մահտեսի Ստեփաննոսն, մահտեսի Գէորգն, մահտեսի Նազարն, մահտեսի Սարուխանն, մահտեսի Ստեփաննոսն և փոքր մահտեսի Ստեփաննոսն և բազմաշխատ պարոն Սիմոնն և այլ համայն բարի անձինք որք ձեռընտու եղեն և աշխատեցան. Տէր Յիսուս գրեսցէ զամենեսեան ի դպրութեան կենաց իւրոց. յամի Տեառն 1781»:

Բուխարեստում հայկական եկեղեցու գոյության մասին խոսվում է նաև 1769 թվականին օսմանյան զորքերի կողմից Բուխարեստի վրա կատարված ներխուժման ժամանակ[3]:

Աշխարհագրագետ Հ. Ղուկաս Ինճիճյանի ուսումնասիրություններից մեկում նշվում է, որ անցյալում Բուխարեստում բազմաթիվ հայկական եկեղեցիներ են եղել, իսկ այժմ մնացել են միայն երկու քարաշեն եկեղեցիներ, որոնցից մեկը փոքր է[4]:

Բուխարեստի հայկական եկեղեցու մասին մեկ ուրիշ նկարագրության մեջ հետևյալ տեղեկությունն է տրվում.

«Գեղեցիկ է եկեղեցի և վանատուն լատինացուց, ուր օթագայեցաք, որ և կառուցաւ յաւուրս մեր առաջնորդութեամբ բազմարդիւն Հ. Ամբրոսիոսի Պապիկեան Տրապիզոնցւոյ»[5]:

«Յառաջագոյն բազում էին աստ հայք, և շինեցին եկեղեցիս, յորոց երկուք կան մինչև ցայժմ. մին փոքր է, և միւսն գեղեցիկ քարաշէն և փառաւոր կառուցեալ յանուն Հրեշտակապետաց. ունի երկու գմբեթս և բազում զարդս և անօթս. իսկ տունք հայոց են 120, յորոց ոմանք վաճառական են, և այլք արհեստաւորք»[6]:

Ներկայումս Բուխարեստում գտնվող հայկական եկեղեցին կառուցվել է նախկին եկեղեցու տեղում 1911—1915 թվականներին, ինչպես այդ ցույց է տալիս նրա հիմնադրմանը վերաբերող հետևյալ արձանագրությունը.

«Յամի ծննդեան Փրկչին աշխարհի 1911 (ՌՋԺԱ) յամսեանն Յուլիսի յաւուրն քսաներորդի և չորրորդի և ի քառասներորդի հինգերորդի ամի տիրապետութեան Քարոլի Առաջնոյ Վեհափառ Թագաւորին և մայրախնամ կողակցի Նորին Եղիսաբեթի Թագուհւոյն, գահաժառանգ Ֆէրտինանտ իշխանի և կողակցի Նորին Արքայական Մեծութեան Մարիա իշխանուհւոյ և որդւոց նոցին Քարոլի, Եղիսաբեթի, Մարիայի, Նիքոլայի և Իլէանայի իշխանազանց.

Իսկ յաւուրս դառնակսկիծ մահու Տ. Տ. Մատթէոսի Բ-ի Իզմիրլեան գերերջանիկ կաթողիկոսին Ամենայն Հայոց, որ յԷջմիածին ի Վաղարշապատ և ի տեղապահութեան հայրապետական գահուն Տ. Գէորգայ բարձրաշնորհ արքեպիսկոպոսի Սուրենեան կատարի հիմնարկութիւնս:

Նախակարապետ և առաջին խորհրդական Գահապետին Ռոմանոյ և նախարար ելևմտական գործոց գոլով պարոն Փէթրէ Բ Քարփ և քաղաքապետ մայրաքաղաքիս Պուքրէշի՝ պարոն Տ. Տօպրէսքու:

Կատարեցաւ հիմնարկութիւն սրբոյ եկեղեցւոյս յանուն սրբոց Հրեշտակապետաց հանդիսիւ մեծաւ ի տեղին ուր շինեալ կայր նախկինն վերանորոգեալ յամի Տեառն 1781 որպէս վկայէ արձանագրութիւնն քարակոփ որ հաստատեալ կայր ի վերայ դրան մտին սրբոյ տաճարին:

Նորոգ տաճարս այս շինի բազմախոնջ աշխատութեամբ և անվհատ ջանիք հոգաշատ անդամոց պատ. թաղականութեան որք են, Իսաքիմ Իւանոգլու ատենապետ, Կաւրիլ Միհաիլէսքու գանձապահ, ընկերակցութեամբ երից մրջնաջան անդամոց Ժաք Շահիմ, Թադէոս Կ. Մելիտոն և Հաճի Յակովբ Թոսուն, թևակից ընդ իւրեանս ունելով զջանաշատ պարոնայս՝ Ժորժ Հիլ և Մկրտիչ Ստեփան-Պետրոս, քննիչք համարառու ժողովոյս:

Նորոգ շինութեան սրբոյ տաճարիս՝ թիկունս կանգնին և ազնուազարմ պարոն Սագէ Կրիկորին որ գործ ի բռին էած զկտակ շնորհունակ և եկեղեցասէր տիկնոջ Տուտուքա Պրլգլեանի որ նուիրեաց ոսկիս հազարս յանուն վերանորոգութեան սրբոյ եկեղեցւոյս յամին 1847 որ և յայնմ ժամանակէ ցայս վայր ի գանձարանի իմիք բումեն բարեխնամ պետութեան ի պահ եդեալ արդիւնաւորի մինչ ի գումարն երկու հազարաց գաղղիական ոսկեաց:

Առ ի հատուցանել ընդ փոյթ ցվախճան գործոյս գօտեպինդ կազմացաք մասնախումբ իմն գործակից յանձնուէր որդւոց հայութեան զԳրիգոր Ա. Մելիք, զԱրմենակ Մանիսալեան, զՐոպէրթ Ասլան, զՅակովբ Օհանէսեան, զԹոմաս Սիմոնէսքու, զՔրիստէա Տէօշլիու և զՄելիտոն Մելիտոնեան:

Ստուերագիր շինութեանս գծագրեցաւ ի

[3] H. Dj. Siruni, O năvălire necunoscută a bănderlor turceşti în ţările române în 1769 (dupa documente turceşti din Arhivele Statului. „Revista arhivelor", Tom. IV—I, Bucureşti, 1940, p. 37:

[4] Հ. Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի. Եւրոպիա, հատոր Զ, Վենետիկ, 1804, էջ 220:

[5] Հ. Մինաս Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, շարագրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբք, Վենետիկ, 1830, էջ 215:

[6] Անդ, էջ 206 (հատված 347):

մեծէ ճարտարապետէ յազգէն Ռումենաց ի պարոնէ Տ. Մայմարոլու և յաւարտ ի գործ ածի ի պարոն Չէրքէզ (Սարգիս) քաջէ արուեստագիտէն:

Արարողութիւնք հիմնարկութեան սրբոյ եկեղեցւոյս կատարեցաւ ի ձեռն սրբակրօն հարց Յարութիւն աւագ քահանայ Անդրէասեանի և Ղևոնդ քահանայ Միքայէլեանի առաջի բազմաց հաւատացելոց ի Քրիստոս:

Յանմոռաց յիշատակ սոցա ամենեցուն որք աստանօր՝ օրինակս բազումս տպագրեցաք յարձանագրութենէս յորոց մին ի գիր առեալ ի վերայ մագաղաթի յաւուրն հանդիսի քարահիւս եդաւ ընդ հիմամբ և միւսն ի նոտարատան հոգաբարձ պատ. խորհրդոյ եկեղեցւոյս:

Պահեսցէ Տէր Աստուած զամենայն նուիրատուս և զհաւատացեալ վաստակաւորս որք կացցեն ցաւարտ սրբոյ շինութեանս ի մշտնջենական յիշատակ ազգիս Հայոց, ի փառս Մեծին Աստուծոյ և համագոյ սուրբ Երրորդութեան, գովեալ և փառաբանեալ, որում վայել են երկրպագութիւն, փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բուխարեստի հայկական եկեղեցին առաջին հայացքից նմանվում է Էջմիածնի Մայր տաճարին, որը կառուցվել է 4-րդ դարում և գտնվում է Հայաստանում: Ամենից առաջ մուտքի զանգակատունը հար և նման է Էջմիածնի տաճարի զանգակատանը: Նաոսի վերևում գտնվող աշտարակը, ինչպես նաև պրոնաոսի վերևի երկու փոքր աշտարակները նման են Էջմիածնի տաճարի աշտարակներին, այն տարբերությամբ սակայն, որ Էջմիածնում փոքր աշտարակները գտնվում են նաոսի վերևում:

Բուխարեստի հայկական եկեղեցու նախագիծը կազմելիս ճարտարապետ Մայմարոլուն ընդհանուր գծերի մեջ ներշնչվել է Հայաստանի երկու մեծ տաճարներից՝ Էջմիածնի Մայր տաճարից, նրա վերնամասի կառուցվածքի ճարտարապետական ծավալներից և Անիի Մայր եկեղեցուց (989—1001), այդ բազիլիկայի հիմնական շենքամասի և նրա ճակատային մասերի ճարտարապետական ծավալներից:

Իմ կարծիքով, Բուխարեստի հայկական եկեղեցու կառուցումով ճարտարապետ Մայմարոլուն ստացել է արժեքավոր մի համադրություն Հայաստանում գտնվող գլխավոր տաճարների՝ Էջմիածնի, Սիսավանի (Է դար), սուրբ Հռիփսիմեի (Է դար), Արուճի և Անիի, իրագործելով այսպիսով գեղարվեստական բառացիկ արժեք ներկայացնող մի հուշարձան: Ինչ վերաբերում է այս եկեղեցու որոշ մանրամասներին, Հայաստանի այլ հուշարձաններ նմանապես ներշնչել են նրան, ինչպես այդ կտեսնենք ստորև:

ՄՈՒՏՔԻ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԱՇՏԱՐԱԿԸ

Էջմիածնի Մայր տաճարի (Դ դար) և Բուխարեստի հայկական եկեղեցու ճարտարապետական հատակագծերը, ինչ վերաբերում է զանգակատան աշտարակին, բացարձակապես նման են միմյանց: Միակ տարբերությունը օգտագործված շինանյութերի մեջ է. առաջինի աշտարակը կառուցված է քարից, երկրորդինը՝ երկաթբետոնից:

Էջմիածնի տաճարի զանգակատան ճակատի ճոխ զարդաքանդակները շատ պարզեցված են Բուխարեստի հայկական եկեղեցում խնայողության և արդիականացման պատճառով: Բուխարեստի հայկական եկեղեցու զանգակատան աշտարակը Ռումինիայի մայրաքաղաքի ընդհանուր ճարտարապետության մեջ ինքնատիպ և նկարչագեղ մի տարր է կազմում, շնորհիվ այն մեծ ծավալների, որ պարունակում են աշտարակի երեք հարկերը, և շնորհիվ նաև միջին մասի շարքերի գոթական ոճով կառուցված կորաձև կամարների ներդաշնակության: Ինքնատիպությունը շեշտվում է նմանապես հիմքի հորիզոնական քառակուսի հատակագծի և եկեղեցու զանգերը պատսպարող աշտարակի ութանկյուն հատակագծի տարբերակումով:

ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍԸ

1.—Հորիզոնական հատակագիծը

Բուխարեստի հայկական եկեղեցու նավաձև հորիզոնական հատակագիծը նման է սուրբ Հռիփսիմեի, Սիսավանի, Արուճի և Անիի եկեղեցիների հատակագծերին: Այստեղ հատակագիծը փոքր-ինչ ավելի երկարավուն է, և այդ հանգամանքը հուշարձանին տալիս է առանձին մի հմայք և նրբագեղություն:

2.—Պատվանդանը

Եկեղեցու հիմքերը բարձրանում են գետնից վեր, պատվանդանի ձևով, ոչ շատ բարձր, ինչպես Էջմիածնի և սուրբ Հռիփսիմեի տաճարների հիմքերը: Պատվանդանի լայնությունը նվազում է աստիճանաբար, և միակ տարբերությունը հայկական մյուս եկեղեցիներից՝ նրա բարձրության մեջ է. այստեղ պատվանդանի բարձրությունն ավելի մեծ է:

3.—Ճակատները

Եկեղեցու հյուսիսային և հարավային ճակատները համարյա նույնանման են, այն տարբերությամբ միայն, որ հարավային ճակատն ունի մուտքի երկու դռներ, որոնցից մեկը աբսիդի համար է, մյուսը՝ նավի: Այս դռների վերևի մասում կան զարդաքանդակներ: Հյուսիսային ճակատն ունի միայն մեկ դուռ: Այս երկու ճակատներից յուրաքանչյուրի վրա բացված են կամարաձև վերնամասերով երկու բարձր և նեղ լուսամուտներ, որոնցից լույսը թափանցում է պրոնաոս: Բացի այդ, հյուսիսային և հարավային այս ճակատները իրենցից ներկայացնում են մի գեղեցիկ իրագործում, շնորհիվ նույնատիպ նեղ և շատ բարձր զույգ լուսամուտների, որոնք ավարտված են կամարաձև վերնամասերով և իրարից բաժանված մի շատ նեղ ուղղանկյուն տարածությամբ, որի վերևում գտնվում է մի զարդակամար՝ այդ նեղ տարածության մեջ քանդակված մի խաչով: Արևի լույսը առատորեն թափանցում է եկեղեցու ներքնամասը այդ դրվագազարդ անսամբլի նեղ անցքերից:

Եկեղեցու ճակատներն իրենց վերնամասում ընդհանուր քիվից ավելի վեր են բարձրանում և ավարտվում հունական տաճարները հիշեցնող եռանկյունաձև մի ճակտոնով, որի ներքևում կա մի գեղեցիկ զարդաքանդակ, որը ներկայացնում է ֆիգուրներով մի տեսարան:

Վերոհիշյալ երկու դռների վերևում կան կամարաձև զարդաքանդակներով երկու փոքրիկ վարդակներ՝ նման Թալինի եկեղեցու վարդակներին: Խորանի կողմում գտնվող ճակատը, որն ուղղված է դեպի արևելք, ունի չորս փոքր լուսամուտներ՝ նման այն լուսամուտներին, որոնցից լույսը թափանցում է եկեղեցու պրոնաոսը: Քիվի ներքևում կա ճոխ զարդաքանդակներով հորինված մի զարդագոտի:

Եկեղեցու գլխավոր ճակատը, որն ուղղված է դեպի արևմուտք, պարզ է և անզարդ: Այստեղ է գտնվում եկեղեցու գլխավոր դուռը, որը շինված է փայտից և զարդարված երկրաչափական մոտիվներով:

4.—Տանիքը

Եկեղեցու տանիքը, իր երեք աշտարակների թե՛ ձևով և թե՛ զարդարանքով, նույնքան ուշագրավ է, որքան ճակատները: Աշտարակներից մեկը մեծ է, երկուսը՝ փոքր, երեքն էլ կառուցված լինելով ըստ Էջմիածնի տաճարի աշտարակների օրինակի:

Մեծ աշտարակը, որը տեղադրված է նաոսի վերևում, այս հուշարձանի ճարտարապետական ամենաուշագրավ տարրն է կազմում, շնորհիվ իր ծավալի կարևորության և ձևերի հավասարակշռության:

Պետք է նշել, որ եկեղեցու տանիքի՝ անձրևաջրերի հոսքի համար նախատեսված թաղի թեքության անկյունագիծն ավելի մեծ է, քան Էջմիածնի տաճարի տանիքինը, որովհետև Բուխարեստում անձրևներն այնքան հաճախակի չեն, որքան Էջմիածնում: Միևնույն տարբերությունը նկատելի է նաև փոքր աշտարակների և զանգակատան թաղերի թեքության մեջ:

Մեծ աշտարակի հիմքը բաղկացած է տասը նիստերից: Նույն թվով նիստեր ունեն նաև թմբուկը և գմբեթը: Այս աշտարակի լուսամուտները հասնում են մինչև կամարների բարձրությունը և հետևաբար շատ ավելի մեծ են, քան Էջմիածնի տաճարի աշտարակի լուսամուտները, որոնք ունեն կամարների կես բարձրությունը միայն: Այս հանգամանքը բնական լույսն ավելացնում է Բուխարեստի եկեղեցում, ինչ որ բնականաբար մեծ առավելություն է ներկայացնում:

Աշտարակի թմբուկը, երկու եկեղեցիներում էլ, ունի ճոխ զարդաքանդակներ թե՛ փոքր սյուների և թե՛ դրանց վերևի կամարաշարի մոտ, ինչպես նաև քիվի զարդագոտու վրա:

Պրոնաոսի երկու անկյունների վրա նստած մյուս երկու փոքր աշտարակները, որոնցից յուրաքանչյուրը ունի ութ փոքր սյուներ, նույնպես հիշեցնում են Էջմիածնի տաճարի փոքր աշտարակները: Այս աշտարակների ճարտարապետական ձևավորման մեջ, սակայն, կա մի որոշ տարբերություն. սրանք ունեն վարդակների ձևով կլոր լուսամուտներ:

5.—Ծածկը

Ռումինացի ճարտարապետը Բուխարեստի եկեղեցու ծածկի՝ անձրևաջրերի հոսքի համար նախատեսվող թեքությունների ձևավորման, ինչպես նաև ցինկե տախտակների ուռուցիկ զոդման եղանակի մեջ ներշնչված է սուրբ Հռիփսիմեի և Արուճի եկեղեցիներից:

6.—Եկեղեցու արտաքին զարդաքանդակները

Ճարտարապետ Մայմարոլուն, միշտ իր աչքի առաջ ունենալով հայկական եկեղեցիների զարդաքանդակների օրինակները, հաջողվել է Բուխարեստի եկեղեցու արտաքին մասն օժտել նուրբ զարդաքանդակներով:

ա) Ուշագրավ է այն երևույթը, որ նա 12 փոքր լուսամուտների վերևի մասը զարդարել է՝ հիմնելով Թալինի փոքր եկեղեցու մոտիվի վրա, որն ունի կիսաշրջանակի ձև: Հայաստանի մյուս բոլոր եկեղեցիներում, կիսաշրջանակը հենվում է կողմնակի երկու թևերի վրա:

բ) Նաոսի մեծ լուսամուտները և նրանց միջև գտնվող փոքր լուսամուտը զարդարված են երկրաչափական մոտիվներ ունեցող քանդակներով:

գ) Այս լուսամուտների ներքևում, մի կամարի տակ, երևում է ճոխ զարդարանքներով քանդակված մի խաչ, ըստ հայկական եկեղեցիների օրինակների:

դ) Աբսիդի և նաոսի մուտքի փայտաշեն դռներն ունեն երկրաչափական ձևերով հորինված նուրբ զարդարանքներ:

ե) Եկեղեցու գլխավոր մուտքը մոնումենտալ է և գտնվում է դրվագազարդ մի մեծ կամարի տակ:

զ) Զանգակատան հենասյուները, ինչպես նաև փոքր աշտարակների սյունաշարքերն ունեն անտիկ դասական ձև:

է) Եկեղեցու ողջ շենքը շրջապատող քիվի ներքևում գտնվող լայն զարդագոտին հորինված է ճոխ քանդակներով, որոնց գերակշռող մոտիվը երկրաչափական է:

ը) Նաոսի հարավային և հյուսիսային ճակատի ճակտոնին կա քարե մի քանդակ, որը ներկայացնում է Հիսուս Քրիստոսին՝ նստած գահի վրա, աջ ձեռքում բռնած երկրագունդը, իսկ ձախ ձեռքում՝ խաչը: Այստեղ երկու հրեշտակներ շրջանակի մեջ են առնում գլխավոր կերպարը: Քանդակի վրա զգալի է Վերածննդի ոճը: Վերնաճակատի ներքևի մասում կան երկրաչափական մոտիվներով հորինված եռանկյունաձև զարդաքանդակներ:

թ) Զանգակատան երկրորդ հարկը: Այս հարկը պահող չորս սյուներն ունեն լայն զարդագոտիներ և մի սրանկյուն կամար, որի զարդաքանդակները միշտ երկրաչափական են, ինչպես քիվի ներքևում գտնվող ճակտոնի օրինակը՝ քանդակազարդ իր լայն զարդագոտիով:

ժ) Զանգակատան սյուների հիմքերն ու խոյակները հորինված են անտիկ դասական ոճով:

ժա) Պրոնաոսի տանիքի վրա նստած երկու փոքր աշտարակները տեղադրված են քառակուսի մի պատվանդանի վրա, որի պատերի վրա բացված են երկրաչափական մոտիվներ ունեցող մի լայն զարդագոտիով զարդարված կամարներ: Այստեղ նույնպես փոքր սյուների հիմքերն ու խոյակներն ունեն այն նույն զարդարանքները, որ կան զանգակատան մեծ սյուների հիմքերի և խոյակների վրա:

ժբ) Նաոսի մեծ աշտարակը պահող սյուների հիմքերն ու խոյակները իրենց վրա կրում են անտիկ ճարտարապետության դասական ձևերի դրոշմը:

Սյուների վերևում կան արևելյան ոճի սրանկյուն կամարներ, որոնց տակ գտնվող ճոխ զարդաքանդակներն ունեն երկրաչափական մոտիվներ:

Աշտարակի քիվի տակ կան քանդակազարդ չորս զարդագոտիներ, որոնցից մեկը շատ լայն է և հորինված է ըստ Զվարթնոցի, Գայանեի, Սիսիանի, Թալինի և Գեղարդի եկեղեցիների օրինակների:

7.—**Եկեղեցու ներքնամասը**

Եկեղեցու ներքնամասում զգացվում է կաթոլիկ եկեղեցիների մթնոլորտը: Այստեղ պատերի վրա չկան որմնանկարներ, բայց կան կտավի վրա նկարված յուղաներկ մեծ սրբապատկերներ, որոնք ներկայացնում են աստվածաշնչական տեսարաններ և վարպետ նկարիչների ստեղծագործություններ են:

Բուխարեստի հայկական եկեղեցին ճարտարապետական ամենակարևոր հուշարձաններից մեկն է և գտնվում է Ռումինիայի մայրաքաղաքի կենտրոնում:

8.—**Հուշատախտակներ**

ա) Եկեղեցու զանգակատան հյուսիսային ճակատին վերջին տարիներին դրվեց մի հուշատախտակ, որի վրա 1849 թվականի մայիսի 11-ին հայերեն և ռումիներեն լեզուներով փորագրված արձանագրությունը ցույց է տալիս, որ եկեղեցին կրում է «Սրբոց Հրեշտակապետաց» անունը:

բ) Եկեղեցու կառուցման հիսնամյակի առթիվ, ի ներկայության Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, եկեղեցու հարավային ճակատի շքամուտքին դրվեց սպիտակ մարմարից պատրաստված մի այլ հուշատախտակ՝ հայերեն և ռումիներեն արձանագրությամբ:

Ֆրանսերենից թարգմանեց
Պ. ՇԱՀԲԱԶՅԱՆԸ

Բուխարեստ, 6 սեպտեմբերի 1978 թ.





ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 14—16 օրերին Մոսկվայում, «Ուկրաինա» հյուրանոցի հանդիսասրահում, տեղի ունեցավ համամիութենական կրոնական կոնֆերանս՝ Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Պիմենի հրավերով: Կոնֆերանսը նվիրված էր՝ այս տարվա հունիսին Պրագայում կայացած Խաղաղության քրիստոնեական Ե համաժողովի արդյունքների քննարկմանը: Մասնակցում էին Սովետական Միության կրոնական (քրիստոնեական, մահմեդական, հրեական և բուդդայական) հաստատությունների շուրջ հարյուր ներկայացուցիչներ:

Կոնֆերանսում Մայր Աթոռ ս. Էջմիածինը ներկայացնում էին՝ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Մոսկվայի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տիար Հովհաննես Թոփուզյանը և տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը:

Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի բացման խոսքից հետո Կինի և Գալիցիայի միտրոպոլիտ, «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի աշխատանքները շարունակող կոմիտեի նախագահ Ֆիլարետը հանդես եկավ Խաղաղության քրիստոնեական Ե համաժողովի արդյունքների վերաբերյալ ընդարձակ զեկուցումով, որի շուրջ տեղի ունեցավ մտքերի լայն և աշխույժ փոխանակություն:

Մայր Աթոռի պատգամավորության կողմից ելույթ ունեցավ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը: Անդրադառնալով Խաղաղության քրիստոնեական Ե համաժողովի արդյունքներին, ճա բարձր գնահատեց քրիստոնյաների դերը՝ աշխարհում խաղաղության պահպանման գործում:

Ապա նա կանգ առավ տարիներից ի վեր Լիբանանում ավեր գործող քաղաքացիական եղբայրասպան կռիվների վրա և ցույց տվեց այն աղետալի կացությունը, որին մատնվել է «դրական չեզոքության» պահպանող լիբանանահայությունը:

Վերջում սրբազանը կոնֆերանսի մասնակիցներին կոչ արեց՝ աղոթել այդ ասպընջական երկրում խաղաղության վերահաստատման համար:

Կոնֆերանսում լսվեցին մի շարք հետաքրքրական զեկուցումներ արդիական հրատապ հարցերի վերաբերյալ, ինչպիսիք էին «Սովետա-ամերիկյան և սովետա-չինական հարաբերությունները» (զեկուցող՝ Մ. Ս. Կապիցա), «Միջազգային տնտեսական

հարաբերությունների վերակառուցման հարցեր» (զեկուցող՝ Գ. Է. Սկորով), «Մերձավոր Արևելքի պրոբլեմներ» (զեկուցող՝ Ա. Ի. Ֆիլև), «Սովետական հասարակայնության զարգացման հիմնական գծերը և ուղղությունները» (զեկուցող՝ Յու. Ա. Տիխոմիրով), «Զինաթափման պրոբլեմը» (զեկուցող՝ Ի. Գ. Ուսաչև):

Խաղաղության քրիստոնեական Ե համաժողովի արդյունքների հետ սերտորեն առնչվող այդ զեկուցումների շուրջ տեղի ունեցած մտքերի փոխանակումից հետո կոնֆերանսի մասնակիցներն ընդունեցին համապատասխան բանաձև-հաղորդագրություն, որտեղ արտացոլված է Սովետական Միության կրոնական հաստատությունների վերաբերմունքն այն ամենահիմնական հարցերի նկատմամբ, որ այսօր հուզում են աշխարհի բոլոր բարի կամքի տեր մարդկանց:

Կոնֆերանսի աշխատանքների ավարտին ռուս ուղղափառ եկեղեցու կողմից ճաշկերույթ տրվեց նրա մասնակիցների պատվին:

ԹՈՐԳՈՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ



ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՊՐԱԳԱՅՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՌԱՋԻԿԱ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

Չեխոսլովակիայի եկեղեցիների էկումենիկ խորհրդի հրավերով 1978 թվականի դեկտեմբերի 14—16 օրերին Պրագայում տեղի է ունեցել խորհրդակցական մի հանդիպում՝ նվիրված 1979 թվականի հունվարին Կինգստոնում (Ցամայկա) կայանալիք ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանին:

Խորհրդակցությանը մասնակցել են Սովետական Միության, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի և Հունգարիայի եկեղեցիների այն ներկայացուցիչները, որոնք անդամ են ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեին:

Ամենայն Հայոց Հայրապետի հրահանգով, հանուն հայ եկեղեցու, սույն խորհրդակցությանը մասնակցել է նաև Մայր Աթոռի դիվանապետ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը, որպես ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի անդամ:

Հանդիպմանը, որը տեղի է ունեցել չեխական եկեղեցու ներկայացուցիչ դոկտ. Իոսիֆ Սմոլիկի նախագահությամբ, գլխավոր զեկուցումով հանդես է եկել «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի նախագահ դոկտ. Կարոլի Տոթ եպիսկոպոսը, որի զեկուցումը նվիրված է եղել ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի առաջիկա նստաշրջանում քննարկվելիք հիմնական հարցերի վերլուծությանն ու պարզաբանմանը: Զեկուցողը այդ հարցերը, ըստ բնույթի, բաժանել է չորս խմբերի՝ ա) աստվածաբանական, էկումենիկ, բ) քաղաքական, ընկերային, գ)անհատական, դ) ֆինանսական:

Սույն հանդիպման ընթացքում խորհրդակցության մասնակիցները միահամուռ պաշտպանել են ԵՀԽ-ի ծրագրերը, որոնք ներկայումս իրագործվում են նրա կողմից: Այդուհանդերձ նրանք իրենց մտահոգությունն են արտահայտել մի շարք հարցերի կապակցությամբ, որոնք վերաբերում են ԵՀԽ-ի գործունեությանը:

Խորհրդակցությունում մեծ տեղ է հատկացվել ԵՀԽ-ի՝ ռասիզմի դեմ պայքարի ծրագրի քննարկմանը: Այդ ծրագրի իրականացման ուղղությամբ ներկայումս ԵՀԽ-ի ծավալած գործունեությունը արժանացել է ներկաների ընդհանուր հավանությանն ու պաշտպանությանը:

Հանդիպման մասնակիցները մի անգամ ևս հաստատել են ԵՀԽ-ի անդամ սոցիալիստական երկրների եկեղեցիների վճռականությունը՝ ընդլայնելու իրենց ներդրումը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի խնդիրների կենսագործման մեջ, և վստահություն են հայտնել, որ աշխարհի տարբեր շրջանների եկեղեցիները այդ բանը կհասկանան:

Խորհրդակցության մասնակիցները որոշակիորեն արտահայտվել են տեղական օրթոդոքս եկեղեցիների համար ԵՀԽ-ում այնպիսի հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտության օգտին, որոնք թույլ տային նրանց ապահովելու ԵՀԽ-ում իրենց վկայությունն ու ծառայությունը, ինչ որ լիովին կհամապատասխաներ քրիստոնեության պատմության մեջ ուղղափառության նշանակությունը:

Դեկտեմբերի 16-ին Չեխոսլովակիայի կառավարությանն առընթեր եկեղեցական գործերի քարտուղարության տնօրեն դոկտ. Կարել Գրուզան ընդունել է հանդիպման մասնակիցներին:

Նույն օրը Չեխոսլովակիայի եկեղեցիների էկումենիկ խորհուրդը նրանց պատվին կազմակերպել է ընդունելություն:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոնի առթիվ Մայր տաճարում 3

Ամանորի և Փրկչի հրաշափառ և սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 6

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին 10

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ . . . 12

Այցելություն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ մեծահարգ Ֆադեյ Տ. Սարգսյանին 15

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանին արքության պատիվ շնորհելու մասին 16

Ցավակցական գրություններ լիբանանահայությանը պատահած աղետների առթիվ 18

Շքանշանների և օրհնության կոնդակների տվչության հանդիսություն Մայր Աթոռում 21

«Ս. Գրիգոր Լուսավորիչ», «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանների տվչության կանոնադրությունները 28

ՄՅՈՒՌՈՆ ԱԲԵՂԱ ԳԸՎԸԳՅԱՆ—Ամանորը Մայր Աթոռում 31

Սուրբ Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում 36

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում 38

Տ. Մյուռոն արեղա Գըվըգյան 40

Տ. Առաքել արեղա Գալայջյան 41

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 42

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Եփրեմ Խուրին Ասորի 46

ՅՈՆ ՍԱՎԱ ՆԱՆՈՒ—Բուխարեստի հայկական եկեղեցին 56

ԹՈՐԳՈՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ—Համամիութենական կրոնական կոնֆերանս Մոսկվայում 61

Խորհրդակցական հանդիպում Պրագայում՝ նվիրված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի առաջիկա նստաշրջանին 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է արտադրության 22.12.1978 թ.: Ստորագրված է տպագրության 6.2.1979 թ.:
Տպագրական 4 մամուլ+5 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 1323

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1979 թ.